Azg
ԱԶԳ
4 ՄԱՐՏ 2005 ՈՒՐԲԱԹ 39 (3205)

Ռեկորդային ցածր ջերմաստիճան է հաստատվել Եվրոպայում

ՄԱԴՐԻԴ, 3 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իսպանիայի Նավարայի հյուսիսային նահանգում սնդիկի սյունը ցած է ընկել մինչեւ մինուս 24 աստիճան: Առաս ձյուն է տեղացել նույնիսկ երկրի հարավում՝ Անդալուզիայում:

1971 թվականից ի վեր ընկած ժամանակաշրջանում ամենացուրտ եւ ձնառատ ձմեռն է տիրում Ֆրանսիայում: Կտրուկ աճել է էլեկտրաէներգիայի սպառումը: Երկիրն ստիպված է շտապ կարգով այն ներմուծել Գերմանիայից եւ Իսպանիայից: Չեխիայի, Սլովակիայի եւ Սլովենիայի մի քանի մարզերում ջերմաչափի սնդիկի սյունն ընկել է մինչեւ մինուս 30 աստիճան:

Ամբողջ Հոլանդիան հայտնվել է ձյան տակ, սառցակալել են Ամստերդամի նշանավոր ջրանցքները: Երկրի հյուսիսում փակվել են դպրոցները:

Հունաստանի հյուսիս-արեւմուտքում եւ կենտրոնական մասում ձյուն է տեղացել: Կտրուկ գրտելը եւ կարկուտի ու ձյան տեսքով տեղումները հսկայական խցանումների պատճառ են դարձել Իտալիայի ճանապարհներին: Տարվա այս եղանակի համար արտակարգ ցուրտ է նաեւ Մոսկվայում:

Հայ եւ վրացի երիտասարդները «կիսելու բան չունեն»

Խնդիրը շատ պարզ է՝ վրաց եկեղեցին փորձում է զավթել Թբիլիսիի հերթական հայկական եկեղեցին

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Թբիլիսիի Լեսելիձեի (նախկինում՝ Արմյանսկի բազար) փողոցում գտնվող հայկական Նորաշենի Սբ. Աստվածածին եկեղեցու շուրջը ծագած տարաձայնությունները հարթելու նպատակով երեկ Վրաստանի մայրաքաղաքում կազմակերպվել է հաշտեցման խաղաղ երթ:

Թբիլիսիում գործող «Նոր սերունդ» հասարակական կազմակերպության ղեկավար Մարի Միկոյանն «Ազգի» հետ հեռախոսազրույցում ասաց, որ իր գլխավորած կազմակերպությունը եւ Վրաստանի երիտասարդական կազմակերպությունների ազգային միությունը (վերջինս ներառում է շուրջ 45 հասարակական կազմակերպություններ) համատեղ ակցիա էին կազմակերպել՝ հաշտեցման երթ, նպատակ ունենալով օգնել հայ եւ վրաց եկեղեցիների միջեւ ծագած խնդիրը հարթելուն:

Մի քանի տասնյակ հայ եւ վրացի երիտասարդներ հաշտեցման երթն սկսել են Նորաշենի հարեւանությամբ գտնվող վրացական Սբ. Սիոնի եկեղեցու մայր տաճարից, կանգ առել Նորաշենի մոտ, ապա շարժվել Հայ առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդանիստ Սբ. Գեւորգ եկեղեցի, որտեղ նրանց դիմավորել են թեմի առաջնորդ Վազգեն եպս. Միրզախանյանը եւ Աբգար վրդ. Հովակիմյանը:

Տես էջ 2



Ձախից աջ՝ Նորաշենը, ռուսական եկեղեցին, վրացական դարձած հունական եկեղեցին, հետին պլանում՝ Սիոնի Մայր տաճարը:

Ուղուղ առաջ գնդատես հա՞յրն է ահաբեկել դեկանին

Շրջանառվող լուրերի համաձայն, նախընթաց օրը Երեւանի պետական տնտեսագիտական ինստիտուտում կատարվածն այսպիսի նախադատություն է ունեցել:

Ընդհանուր տնտեսագիտական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Համլետ Քեհիյանի գնդապետ հայրը դեռեւս նախորդ օրը ինքն է այցելել ու ահաբեկել դեկան Ալբերտ Հովհաննիսյանին, թե «դում չեմ մարսի, եթե իմ տղան դուրս մնա ինստիտուտից»:

Հիշեցնենք, որ ուսանողը դեկանի վրա գազային ատրճանակով կրակել էր, որովհետեւ հեռացվել էր ինստիտուտից:

Բարեբախտաբար, երեկ դեկանն արդեն ներկայացել էր աշխատանքի: Նրա առողջությանը սպառնացող լուրջ վտանգ չկա, պարզապես քիմիական նյութի ներգործությունից վնասվել են աչքերը:

Տղայի արարքը ինստիտուտի դասախոսական կազմի համար անսպասելի է, որովհետեւ ամեն տարի այս ինստիտուտից 50-60 ուսանող է դուրս մնում, եւ առ այսօր նման դեպք չէր արձանագրվել:

Համլետ Քեհիյանի համար ճակատագրական է դարձել «Իրավունք» առարկայից ստացած երրորդ անբավարարը: Այդ առարկայի դասախոս Լիդա Մեհրաբյանը ինստիտուտում ամենաօբյեկտիվ մասնագետի համարում ունի:

Արձագանքելով «Տեցի կրուգում» կատարված իրադարձություններին, ինստիտուտի դասախոսներից մեկը եղածը մեկնաբանեց նույն «բեսպրեդելի» շրջանակներում. ուսանողի սոցիալական կարգավիճակն է նրան նման քայլի դիմելու վստահություն ներշնչել: Ինստիտուտի այլ աշխատակիցների կարծիքով էլ, Համլետ Քեհիյանը համեստ ուսանողի տպավորություն է թողել:

Կ. Դ.

66 մանկապիղծների դատն սկսվեց Ֆրանսիայում

Ֆրանսիայի դատաիրավական պատմության ամենամեծ գործերից մեկը երեկ սկսեց լսվել Անժեր քաղաքի (Ֆրանսիայի արեւմտյան մասում) դատարանում: 66 կանայք եւ տղամարդիկ հատուկ այս դատավարության առթիվ կառուցված դահլիճում նստեցին ամբաստանյալների աթոռին, մինչ 60 փաստաբաններ մասնակցում են 430 էջանոց դատական գործի լսմանը:

Գործը վերաբերում է 45 տուժած երեխաների, որոնցից ամենամեծը 14 տարեկան է, իսկ ամենափոքրիկը՝ 6 ամսական: 66 ամբաստանյալները, որոնցից 39-ը տղամարդիկ են, իսկ 27-ը՝ կանայք, մեղադրվում են մանկապղծության (պեդոֆիլիա) եւ մանկապղծության մղելու հանցանքով: Մեղադրանքը հաստատվելու դեպքում նրանց սպասում է մինչեւ 30 տարվա բանտարկություն:

Ենթադրյալ հանցագործությունները կատարվել են 1999 թ. հունիսից 2002 թ. փետրվարի ընթացքում: Անվտանգության ուժերը ամբաստանյալներին ձերբակալել են հետեւելով մի տղամարդու, որը նախապես նույն հանցագործության կալանքը կրելուց հետո ազատ էր արձակվել: Վերջինս եւ ամբաստանյալներից մեկ ուրիշը պեդոֆիլների ցանցի պարագլուխներն են համարվում:

Ամբաստանյալների մեջ են նաեւ երեխաների ծնողներից ոմանք, որոնք չնչին վարձատրության դիմաց վաճառել են իրենց աղջիկներին ու տղաներին: Երբեմն այդ վարձատրությունը եղել է ավտոմեքենայի մեկ նոր անիվ: Ուրիշ երեխաների տրվել են փոքր գումարներ, խաղցրավենիք կամ ծխախոտ: 10 տարեկան մի աղջկա ենթադրաբար բռնաբարել են 30 մեծահասակներ: Գրեթե բոլոր ամբաստանյալներն էլ կառավարությունից սոցիալական նպաստ ստացողներ են:

ԵԱՀԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՀՈՐԴՈՐՈՒՄ Է

Հանցագործություն մի համարեք գեղասպանության մասին հայտարարությունները

Զանգվածային լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Միկլոս Հարաշտին Թուրքիային կոչ է արել այլեւս հանցագործություն չհամարել հայտարարությունները, որ հայերը ցեղասպանության են ենթարկվել: Ըստ «Մեդիամախի», այս մասին ասվում է Հարաշտիի՝ Թուրքիայի արդարադատության նախարարին ուղղված նամակում:

ԵԱՀԿ ներկայացուցիչը ողջունել է Թուրքիայի քրեական օրենսգրքի բարեփոխումը, որի նորացված տարբերակն ուժի մեջ կմտնի ապրիլի 1-ին: Մյուս կողմից, նշել է Հարաշտին, «ձեր քրեական օրենսգիրքը շարունակում է պարունակել մի շարք անհանգստացնող դրույթներ, որոնք հակասում են արտահայտման ազատության ԵԱՀԿ պարտավորություններին, եւ դա լուրջ մտահոգություն է առաջացնում իմ գրասենյակում»:

ԵԱՀԿ ներկայացուցիչը հիշեցրել է «Ազգային շահերի վիրավորանքները» բացատրական փաստաթուղթը, որը կցված է Թուրքիայի քրեական օրենսգրքի 305 հոդվածին: Հենց այս փաստաթուղթն է թույլ տալիս հանցագործություն որակել հայտարարությունները, որ հայերը ենթարկվել են ցեղասպանության:

Դեսպան Էվանսը լիազորված չէր խոսելու ցեղասպանության մասին

ԱՄՆ խոշորագույն հայկական կազմակերպությունները համատեղ նամակով դիմել են Ջորջ Բուշին՝ կոչ անելով օգտագործել «հայոց ցեղասպանություն» բառերն ապրիլի 24-ին ամերիկահայերին ուղղվելիք ամենամյա ուղերձում: «Հայոց ցեղասպանության 90-ամյակի նախաշեմին մենք կոչ ենք անում Ձեզ, որն նախագահ, հետեւել Ռոնալդ Ռեյգանին եւ բազմաթիվ այլ ամերիկացի պատասխանատու անձանց օրինակին եւ հաստատել պատմական փաստերը, որոնք դում արդեն մեկ անգամ ճիշտ որակել եք Հայոց ցեղասպանություն», ասվում է նամակում, որը ստորագրել են ԱՀՀ-ն, ՀԲԸՄ-ը, Հայ դատի հանձնախումբը եւ մի շարք այլ կազմակերպություններ:

Նախօրեին Սոիտակ տան ներկայացուցիչը «Ազատությանը» տված հարցազրույցում ասել էր. «Այն, ինչ որոշեց անել դեսպան Էվանսը, լիովին նրա սեփական նախաձեռնությունն էր, որը միանգամայն հակասում է ԱՄՆ կառավարության քաղաքականությանը, որը հնչեցնում է մեր նախագահը... Մեր կառավարությունում չկա որեւէ մեկը, որը կարող է լիազորել դեսպան Էվանսին նման հայտարարություն անելու»:

Հիշեցնենք, որ փետրվարի 19-ին Էվանսը Կալիֆորնիայի հայության հետ հանդիպմանը, արտահայտելով իր անձնական տեսակետը, Հայոց ցեղասպանությունը 20-րդ դարի առաջին ցեղասպանություն էր որակել, ինչպես նաեւ նշել, թե «բոլորը հասկանում են, որ Ղարաբաղը չի կարող լինել Ադրբեջանի կազմում»:

ԵԱՀԿ առաքելության զեկույցը կհրապարակվի մարտի 17-ից հետո

Մարտի 2-ին Պրահայում տեղի ունեցած Ադրբեջանի արտգործնախարարի եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հանդիպմանը մասնակցել է նաեւ ԵԱՀԿ փաստահավաք առաքելության ղեկավար Էմիլի Հաբերը, հաղորդում է Բաքվի «Էխո» թերթը: Էլմար Մամեդյարովն ասել է, որ փաստահավաք առաքելության պատրաստած զեկույցը հասարակությանը կներկայացվի, երբ մարտի 17-ին դրա հետ ծանոթանան ԵԱՀԿ մշտական խորհրդի անդամները:

Հունվարի 30-ից փետրվարի 7-ը ԵԱՀԿ փաստահավաք առաքելությունը ԼՂՀ զինված ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքներում մոնիտորինգ էր անցկացնում: Բաքուն պնդում է, որ Երեւանն այդ տարածքներում բնակեցման պատասխանատու քաղաքականություն է վարում: Փաստահավաք առաքելության զեկույցը հստակություն կմտցնի՝ արդյոք հիմնավորվա՞ծ են Բաքվի պնդումները:

Տոնավաճառների առեւտրականները բողոքում են

PHOTOLURE

Երեկ կառավարության շենքի առջեւ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման առիթով բողոքի ցույց էին կազմակերպել տոնավաճառների առեւտրականները: Նրանց պահանջը նույնն է, ինչ եղել է նախկինում՝ տոնավաճառները զերծ պահել ՀԴՄ-ներից: Հիշեցնենք, որ տոնավաճառների առեւտրականների նախորդ տարիների բողոքի ցույցերի արդյունքում կառավարությունը հրաժարվեց իր իսկ որոշման իրագործումից եւ մեքենաները չտեղադրվեցին տոնավաճառներում: Սակայն այս տարի իրավիճակն այլ է, քանի որ դրանց տեղադրման վերաբերյալ խորհրդարանն ընդունել է համապատասխան օրենք, որին կողմ են քվեարկել նախկինում առեւտրականների պահանջը պաշտպանող «Օրինաց երկիր» կուսակցության պատգամավորները:

Հարկ ենք համարում նաեւ հիշեցնել, որ ըստ պաշտոնական վիճակագրության, երկրի մանրածախ առքուվաճառքի գրեթե մեկ երրորդը (2004 թ. 32 տոկոսը) կատարվում է տոնավաճառներում, բայց այդ շրջանառությունը որեւէ կերպ չի արձանագրվում եւ հարկվում: Այսինքն, պետբյուջեն եւ սոցիմնադրամն այստեղից մուտքագրեթ չեն ունենում: Ամենայն հավանականությամբ, երեկվա ցույցին առեւտրականներին մղել էին տոնավաճառների տերերը, որոնք չեն ցանկանում հրաժարվել առեւտրի ոլորտում իրենց արտոնյալ վիճակից եւ ցանկանում են պետության հետ չկիսել վաճառողներին գոփելու մենաշնորհը:

Ա. Մ.

Ընթացիկ

Վենետիկի եւ ԵԱՀԿ փորձագետների մասնակցությամբ խորհրդարանում մեկնարկել են ընտրական օրենսգրքի բարեփոխումների քննարկումները: Նրանց երեկ ընդունել է ԱԺ նախագահը: Փորձագետները Երեւան են եկել հատուկ ընտրական օրենսգրքի գրավոր փորձագիտական եզրակացությունը մեր խորհրդարանականների հետ քննարկելու համար: Նոյտակը միջազգային չափորոշիչներին արժանի ընտրական օրենսգրքի ստեղծումն է:

«Առդարություն» խմբակցությունից քննարկմանը մասնակցում էին Շավարշ Քոչարյանը, Գրիգոր Հարությունյանը, կոալիցիայի, ՄԱԿ-ի եւ «Ժողովրդավարություն»-ի ներկայացուցիչներ: Քննարկումը փակ էր, այնպես որ առդումների մասին տեղեկացավ «Հանրապետական» խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանից**: Փորձագետներից բացի այս հանդիպում-խորհրդակցությանը ներկա է եղել նաեւ ԵԱՀԿ Հայաստանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Վլադիմիր Պրյախինը:

«Փորձագիտական եզրակացության 62 առաջարկներից 42-ը ընդունելի են մեզ համար, բայց կան նաեւ ձեւակերպումների խնդիրներ: Այսօրվա խոսակցությունը հիմնականում դրանց վերաբերյալ էր, որոնք հարցերի շուրջ փորձագետներն իրենք էլ դժվարանում էին լուծում առաջարկել»:

Հիշեցնենք, որ փորձագետների դիտողությունները հիմնականում վերաբերում են ընտրացուցակներին, հանձնաժողովներ կազմելուն, դիտորդների եւ վստահված անձանց ինստիտուտների իրավասություններին:

Արդեն հայտնի է, որ մեր եւ եվրոպացիների հիմնական հակասությունը վերաբերում է ընտրական հանձնաժողովների ձեւավորմանը առ այն, որ ըստ կարգի, նախագահը հանձնաժողովում 3 անդամ նշանակելու իրավասություն ունի: Դժվարամարտ այդ հարցը թողնվել է Գալուստ Սահակյանը: Նա նաեւ ընդգծեց, որ իրենք հարցադրումներ ու առաջարկներ ակնկալում են ավելի շատ ընդդիմադիր ճամբարից, եւ փորձելու են նրանց առաջարկներին ավելի մեծ տեղ տալ օրենքի մեջ: «Նրանց առաջարկների մեծ մասը մեզ համար ընդունելի է»:

Վենետիկի եւ ԵԱՀԿ փորձագետները շրջանցում են խորհրդարանում երկարատեւ վիճարկումների, տարաձայնությունների թեմա դարձած համամասնական-մեծամասնական ընտրակարգերի հարաբերակցության հարցը: Այդ հարաբերակցությունը տարբեր երկրներում տարբեր է՝ կախված նրանց ժողովրդագրական առանձնահատկություններից ու քաղաքական ավանդույթներից:

Որոշակի սրբագրումներ են լինելու նաեւ վստահված անձանց վերաբերյալ: Ըստ գործող կարգի, վստահված անձինք իրավունք ունեն միայն որոշակի հեռավորության վրա հետեւել ընտրական անցուդարձին, այժմ ընտրացուցակները նրանց ավելի մատչելի կդառնան, եւ ձայների հաշվարկին ավելի մոտիկից հետեւելու հնարավորություն կստանան:

Չեն մասնակցի միայն հանձնաժողովի որոշումներ ընդունելու գործընթացին: Կփոխվի ու կմշակվի նաեւ բողոքարկման հատուկ նոր ձեւ:

Փորձագիտական եզրակացության բոլոր դրույթները, ի վերջո, Հայաստանը ժողովրդավարությանն ու դրա չափանիշներին հնարավորինս մոտեցնելն է:

Այսօր Հայաստանում ամեն մի առանձին հարցադրումների վերջում, մյուս բոլոր հարցադրումների ու տեսակետների պարզաբանումից հետո: «Հավանաբար այլընտրանքային առաջարկներից մեկը կլինի ոչ կուսակցական հանձնաժողովների ստեղծումը, ես կարծում եմ, պիտի այնպիսի լուծում առաջարկվի, որի դեպքում հանձնաժողովն ի վիճակի չի լինի ընտրության ելքը որոշել, մնացածը տեխնիկական հարցեր են», ասաց Գալուստ Սահակյանը:

Հայաստանում վաղուց մոռացել են առդար ընտրությունների մասին: Որքան էլ տարօրինակ է, այդ մասին խոսում են թե՛ խորհրդարանից դուրս մնացած քաղաքական ուժերը, թե՛ ընդդիմությունը, թե՛ խորհրդարանական ու իշխանական ուժերը: Թվում է, թե դա է միայն թե՛ քաղաքական էլիտայի, թե՛ այդ հարաբերական մակարդակին ձգտող կուսակցությունների վարդագույն երազանքը:

Ընտրական օրենսգրքի բարեփոխումներին լծված փորձագետներն ու մեր խորհրդարանականները, սակայն, քաջ գիտեն, որ յուրաքանչյուր բարեփոխում դատարկ հնչյուն է մնալու, եթե իրականություն դարձնելու բարձրագույն կամքը բացակայի: Ընտրացուցակները, միեւնույն է, էլի կեղծվելու են: Անկախ այն բանից, որ կփոխվի հանձնաժողովների ձեւավորման սկզբունքը, ընտրակաբառներ էլի բաժանվելու են: Ընտրություններին մասնակցելու գաղափարը մեզանում ամենից առաջ զուգորդվում է հարստության ու որեւէ կլանի անդամը լինելու իրողությունների հետ: Եթե տանիք ու միջոցներ չունես, անիմաստ է մասնակցել նույնիսկ ավագանու ընտրություններին:

Սակայն եվրոպացի փորձագետները իրենց եզրակացության մեջ շրջանցել են քաղաքական կամքի՝ իբրեւ առդար ընտրությունների անցկացման գլխավոր նախադայմանի անհրաժեշտությունը:

Քննարկումներն այսօր շարունակվում են:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հիմնական խնդիրը վերաբերում է ընտրական հանձնաժողովների ձեւավորմանը

«Մենք ավելի շատ ակնկալում ենք ընդդիմադիրների հարցադրումներն ու առաջարկները»

ԹԲԻԼԻՍԻ

Հայ եւ վրացի երիտասարդները «կիսելու բան չունեն»

1-ին էջից

«Մենք՝ հայ եւ վրացի երիտասարդներս ընտրել էինք հետեւյալ կարգախոսը. մենք պարում ենք Վրաստանում եւ կիսելու բան չունենք», ասաց Մարի Միկոյանը եւ հավելեց, որ հաշտեցման երթը նախապես համաձայնեցվել էր, սացել էին հայ եւ վրաց եկեղեցիների օրհնությունը:

«Մենք ցանկանում ենք ապացուցել, որ հայերն ու վրացիները կիսելու բան չունեն: Այս ակցիայով մենք փորձեցինք ասել, որ Նորաշենի շուրջը ծագած խնդիրը պետք է լուծեն երկու եկեղեցիները, իսկ մենք՝ հասարակական կազմակերպություններս, միայն միջնորդ ենք եւ ցանկանում ենք, որ հարցը լուծվի խաղաղ ճանապարհով», ասաց Մարի Միկոյանը:

Նորաշենի Սբ. Աստվածածին հայկական եկեղեցու շուրջը ծագած հակասությունները նոր չեն: Ավելի քան 15 տարի Վրաց ուղղափառ եկեղեցին, գլխավորությամբ կաթողիկոս-պատրիարք Իլյա Երկրորդի, հետեւողականորեն փորձում է հայերից խլել եկեղեցին եւ դարձնել վրացական: Վրաց ուղղափառ եկեղեցու պատրիարքարանից «Կավկազպրես» գործակալությանը տեղեկացրել են, թե պատմականորեն Նորաշենը վրացական է եղել, եւ եկեղեցում առայժմ պատարագ չի մատուցվում հայկական կողմի բողոքների պատճառով:

Փետրվարի 15-ին Նորաշենն օծվել էր որպես վրաց ուղղափառ եկեղեցի, սակայն տեղի տալով թիֆլիսահայության բողոքներին, Իլյա Երկրորդը որոշել էր ժամանակավորապես փակել եկեղեցին: Սա նշանակում է, որ Իլյա Երկրորդը կիսով չափ զավթել է Նորաշենը, հայկական եկեղեցու կախովի կողոպտի բանալիները նրա մոտ են: Մինչ այդ եկեղեցու բակ էին բերվել վրացական տապանաքարեր, իսկ հայկական գերեզմանաքարերի մի մասը պղծվել կամ տարվել էր:

Նորաշենի Սբ. Աստվածածինը հիմնադրվել է 1467 թ., իր բարձրությամբ աստվերում է վրացական Սիոնին: Այս երկու՝ հայկական եւ վրացական եկեղեցիների հարեւանությամբ է գտնվում ռուսական եկեղեցին, ինչպես նաեւ հունականը, որը մի քանի տարի առաջ յուրացվեց եւ այժմ գործում է որպես վրացական: Քիչ հեռու են գտնվում ադրբեջանական մզկիթը եւ իրանական սինագոգը: Ժամանակին այս տարածքը համարվում էր վրացական հանդուրժողականության խորհրդանիշը: Այսօր, սակայն, վրացական իշխանությունները, որոնց գլխավոր բնութագրիչն ազգայնամոլությունն է, փորձում են յուրացնել այլոց մշակույթը:

Նորաշենի շուրջն աղմուկն սկսվել է 1989 թ., երբ Վրաստանի ազգայնամոլ առաջնորդ Զվիադ Գամսախուրդիան եւ Իլյա Երկրորդն ի թիվս այլ հայկական, հունական եւ ռուսական եկեղեցիների նպատակադրեցին զավթել նաեւ Նորաշենը: Խորհրդային տարիներին եկեղեցին վերածվել էր գրադարանի: 1995 թ. այնտեղից տարան բոլոր գրքերը, վրաց Տարիել քահանան սկսեց «վերանորոգման» եւ եկեղեցու վրացականացման աշխատանքները: Վիրահայությունը, ինչպես նաեւ թեմի հանգուցյալ առաջնորդ Գեւորգ Սերայդարյանը բողոքեցին էդուարդ Շեւարդնաձեին, Թբիլիսիի քաղաքապետ Նիկո Լեկիշվիլուն, Իլյա Երկրորդին:



1855 թ. կառուցված հունական այս եկեղեցին այսօր վրացական է Ծմինդա Նիկոլոզիս Էկլեսիա անունով:

Միջամտեց նաեւ պատրոնական Երեւանը: Թբիլիսիում Հայաստանի դեսպանությունը նոտա հղեց Վրաստանի արտգործնախարարությանը: Վրաստանի խորհրդարանի այն ժամանակվա նախագահ Վախթանգ Գոգուաձեն ընդունեց դեսպան Լեւոն Խաչատրյանին: Նույն տարվա մարտին Իլյա Երկրորդը Թբիլիսիում ընդունեց հայ առաքելական եկեղեցու Արարատյան եւ Շիրակի թեմի առաջնորդներին: Տարբեր բանակցությունների արդյունքում մոտ 10 տարի Նորաշենի շուրջն աղմուկը դադարեցվել էր:

Ղրղզստանում դիտորդի կարգավիճակով

Երեկ խորհրդարանում պետահրավական հանձնաժողովի նախագահ Ռաֆիկ Պետրոսյանն ու «Օրինաց երկիր» խմբակցության ներկայացուցիչ Հովհաննես Մարգարյանը լրագրողներին պատմեցին ղրղզստանյան իրենց առաքելության մասին: Մարտի 24-28-ը նրանք գտնվում էին այնտեղ, ԱՊՀ դիտորդական պատվիրակների կազմում: ԱՊՀ դիտորդների հետ ընտրություններին հետեւել են նաեւ ԵԱՀԿ պատվիրակներ, ընդհանուր առմամբ՝ 550 մարդ:

Հայ պատվիրակները դիտորդի իրավունքով բազմաթիվ խախտումներ ու թերություններ են արձանագրել: Այստեղ քվեարկություններն անցել են նոր մեխանիզմով, ընտրողները դուրս են թանաքոտված մատներով: Բայց այդ գործընթացը հիմնականում հրապարակային չի կատարվել, կիսատ-պռատ, թերի են եղել նաեւ ընտրացուցակները:

Ակնհայտորեն անհանդուրժողական է եղել իշխանությունների վերաբերմունքը ընդդիմության նկատմամբ: 50 ընդդիմադիր թեկնածուներին հենց սկզբից հանել են գրանցումից, ընտրություններից դեռ 3 օր առաջ հոսանքազրկել են ընդդիմադիր լրատվամիջոցներին: Այսինքն, նույն սցենարով, ինչպես աշխարհի բոլոր զարգացող երկրներում, իշ ավելի լավ կամ վատ նաեւ մեզնից:

Մեծամասնական-համամասնական հարաբերակցության խնդրին այստեղ պարզ լուծում են տվել՝ բոլոր պատգամավորներին ընտրում են մեծամասնական ընտրակարգով:

Կ. Դ.

Գյումրին գլխավոր հատակագիծ կունենա

Կառավարությունը երեկ հաստատել է Շիրակի մարզի տարածքային հատակագծման նախագիծը եւ Գյումրու գլխավոր հատակագիծը: Ներկայացնելով այդ փաստաթղթերը՝ քաղաքաշինության փոխնախարար Ռուզան Ալավերդյանը այն կարծիքը հայտնեց, որ Գյումրու գլխավոր հատակագիծը բավարարում է ներկայիս պահանջներին: Այն նախագծվել է՝ հաշվի առնելով սեյսմիկ անվտանգության եւ հուսալիության ապահովման, Կոմայրի թաղամասի պահպանման, կանաչ տարածքների ավելացման եւ այլ անհրաժեշտությունները: «Մինչեւ որ թվականի համար է նախատեսված Հայաստանի երկրորդ քաղաքի գլխավոր հատակագիծը» հարցին նախագծման հեղինակային խմբի ղեկավար Սաշոտ Քալաշյանը պատասխանեց, որ թվականներ որոշելը ընդունված էր խորհրդային տարիներին, իսկ այժմ նման սահմանափակում չի դրվում: Ի դեպ, արժե հիշատակել, որ Երեւանի գլխավոր հատակագծի վերաբերյալ ներկայիս քաղաքապետը եւ նախկին գլխավոր ճարտարապետն ասում էին, որ այն նախատեսված է առաջիկա 10-15 տարվա համար:

Ա. Մ.

Ծառերը վթարային էին, սակայն մասնագետի համաձայնությունը պարտադիր էր

«Այսօրինի ոչինչ չի արվել, պարզապես պարտավոր էին նախորդ ինձ տեղյակ պահել», երեկ Պարույր Սեւակի փողոցում երկու բարդի հատելու վերաբերյալ ասաց Երեւանի գլխավոր դենդրոլոգ **Սուրեն Մախսարյանը:** Երեկ «**Ազգն**» անդրադարձել էր խնդրին, սակայն գլխավոր դենդրոլոգի տեսակետը չէինք կարողացել ներկայացնել: Պրն Մախսարյանը մեզ տեղեկացրեց, որ չի բացառում, որ հատված բարդիները վթարային էին: «Բարդիների արմատային համակարգը վերգետնյա զարգացում ունի, այդ ծառերը հիմնականում զբոսայգիների համար են եւ նպատակահարմար չեն փողոցների եզրին», ասաց նա: Մասնագետը տեղեկացրեց, որ այդ վիճակում են նաեւ Իսակովի, Մյասնիկյան փողոցների բարդիները, սակայն ամեն մի ծառահատման համար գլխավոր դենդրոլոգի համաձայնությունը պարտադիր է:

Ա. Մ.

Հրդեհից տուգած այրվածքներից մահացել է ջութակահար Հասմիկ Ղափանցյանը

Արտակարգ իրավիճակների վարչության լրատվական կենտրոնի տրամադրած օպերատիվ տեղեկագրից տեղեկանում ենք, որ մարտի 2-ին, ժամը 07:35-ին հրդեհ է բռնկել Երեւան քաղաքի Բարբյուսի փողոցի 38 տան 2-րդ հարկում: Հրդեհը վնաս է պատճառել տան գույքին: Այրվածքներից մահացել է տանտիրուհին՝ 1925 թ. ծնված ջութակահարուհի Հասմիկ Ղափանցյանը: Հրդեհը մարվել է ժամը 08:10-ի սահմաններում:

Հայտնաբերվել է 4 տարեկան տղայի դիակ

Մարտի 2-ին, ժամը 06:30-ի սահմաններում Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Չարենցի փողոցի 27 բենզի շրջակայքում հայտնաբերվել է 2001 թ. ծնված Արթուր Թամազյանի դիակը: Դեպքի վայր են մեկնել Արմավիրի մարզային ԱԻ եւ ՔԲ վարչությունների մարզի ոստիկանության եւ դատախազության աշխատակիցները: Հարուցվել է քրեական գործ:

Մ. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Նոր ատոմակայանի կառուցումը տեսական ոլորտում չէ

Հավաստիացրեց էներգետիկայի նախարարը

«Տեսական, թե՛ գործնական ոլորտում է գտնվում Հայաստանում նոր ատոմակայանի կառուցման խնդիրը» մեր հարցին էներգետիկայի նախարար **Արմեն Մովսիսյանը** պատասխանեց, որ այժմ նոր ատոմակայանի կառուցման հիմնավորումներն են մշակվում, հետեւաբար, այդ հարցը գործնական ոլորտում է: Իսկ էներգետիկայի նախարարի երեկ հրավիրած մամուլի ասուլիսն ընդհանրապես նվիրված էր ոլորտի 2004թ. արդյունքների ամփոփմանը:

Անցյալ տարի ոլորտում իրականացված քայլերից Արմեն Մովսիսյանը հիշատակեց «Հայէներգոյի» այդ գործունեության դադարեցումը, որից հետո էներգիա արտադրողներն ու բաշխողները ուղիղ պայմանագրային հարաբերություններ հաստատեցին: Այնուհետեւ նշվեց, որ համակարգն աշխատել է շահույթով, որը կազմել է 3,2 մլրդ դրամ: 2004 թ. արտադրվել է մոտ 6 մլրդ կվտ/ժ էլեկտրաէներգիա, որի մոտ 40 տոկոսը կամ 2,4 մլրդ կվտ/ժ արտադրել է ատոմակայանը, 26,7 տոկոսը կամ 1,6 մլրդ կվտ/ժ՝ ջերմակայանները, իսկ 34 տոկոսը կամ 2,1 մլրդ կվտ/ժ՝ հիդրոէլեկտրակայանները: Այսինքն, ընդհանուր ծավալների մեջ ավելացել է ատոմակայանի եւ հիդրոկայանների արտադրած էլեկտրաէներգիայի տեսակարար կշիռը, նվազել՝ ջերմակայաններինը: Ներկայումս, ըստ նախարարի, հանրապետությունում կառուցվում են 23 նոր ՀԷԿ-եր, սկսվել եւ առաջիկա ամիսներին կավարտվի առաջին հողմաէներգետիկ կայանների շինարարությունը, աշխատանքներ են կատարվում երկրաջերմային էներգետիկայի պաշարների որոնման համար: «Ազգի» մյուս հարցին, թե «հիդրոռեսուրսների առավելագույն հնարավորություններն օգտագործելու դեպքում որքա՞ն կարող է կազմել նրա ծավալը ընդհանուրի մեջ», Արմեն Մովսիսյանը պատասխանեց, որ ներկա 2,1 մլրդ կվտ/ժ-ից դա կարող է հասնել մինչեւ 2,7 կվտ/ժ-ի, այսինքն ավելի քան 40 տոկոսի: Սակայն նախարարն ընդգծեց, որ այս հզորությունը բազիսային չէ, քանի որ սեզոնային է:

Էներգետիկ անվտանգության տեսանկյունից կարեւորվեց Իրան-Հայաստան գազատարի կառուցումը: Տեղեկացվեց, որ մարտից կսկսվի խրամուղիների փորումը, հունիսից՝ խողովակների անցկացումը, իսկ գազատարի շինարարությունն իրականացնում է մրցույթով հաղթած «Հայռուսգազարդ» ընկերությունը:

Նախարարը հայտնեց, որ մարտի 29-ին Երեւան կժամանեն Ճապոնիայի զարգացման բանկի ներկայացուցիչները, որոնց հետ Երեւանի ջերմային կայանի վերակառուցման վարկային պայմանագիր կկնքվի: Ակնկալվում են լուրջ՝ 140 մլն դոլարի ներդրումներ: ԱԷԿ-ի փակման շուրջ մեր հարեւան երկրների պահանջների առնչությամբ Արմեն Մովսիսյանը վերահաստատեց Հայաստանի այն մոտեցումը, որ այդ մասին կարելի է խոսել միայն համարժեք հզորություններ ստեղծելուց հետո: Նշվեց նաեւ, որ ատոմակայանը անընդհատ գտնվում է ՄԱԳԱՏԷ-ի հսկողության տակ, իսկ այս տարի անց է կացվել կայանի սեյսմակայունության հերթական ուսումնասիրություն, որը կատարվում է երեք տարին մեկ անգամ:

«Հայաստանի էլեկտրաշարժիչների գործարանի» վերաբերյալ տեղեկացվեց, որ ձեռնարկությունն արդեն աշխատում եւ օրական թողարկում է 30 տոննա կաուչուկ: «Վոլգաբուրմաշ» ընկերությանը նրա վաճառքը չկայացավ: Ներկայումս պարտատեր կազմակերպություններին կփոխանցվեն «Նաիրիտի» բաժնետոմսերը: Ձեռնարկության այժմյան սեփականատերը «Հայկամ» բանկն է:

Մամուլի ասուլիսի ժամանակ նախարարը հայտնեց, որ նավթի եւ գազի որոնման աշխատանքներ են կատարվելու ոչ միայն Շիրակի մարզում, այլեւ Արմավիրում, որտեղ գազի որոնման աշխատանքները սկսելու պայմանագրային փուլն արդեն ավարտվել է:

Ինչ վերաբերում է երկսակագնային հաշվիչների արտասովոր մրցույթի արդյունքներին, որտեղ հաղթող ճանաչվեց մյուս մասնակցից 5 մլն դոլարով ավելի գնային առաջարկ ներկայացրած «Կոնցեռն-էներգիա» ընկերությունը, արդյոք Արմեն Մովսիսյանը հայտնեց, որ մրցույթի արդյունքները դեռ ամփոփված չեն:

«ՏԻՄ ընտրությունները վերջնականապես կկոտրեն կոալիցիայի ողնաշարը»

Կանխատեսում է Մանուկ Գասպարյանը

Ռոբերտ Քոչարյանի լոեցնելու կարողության շնորհիվ է մինչ օրս պահպանվել հենց ծննդյան օրը՝ 2003 թ. հուլիսի 11-ին, վերահաս մահվան դատապարտված քաղաքական կոալիցիան: Դրան քաջատեղյակ եռյակի՝ ՀՅԿ, ՀՅԴ, ՕԵԿ, այդ թեմայով բամբասանքները պատասխանեցին էապես փոխվել են հրապարակային դաշտ, մասնավորապես ՁԼՄ-ների ոլորտ: Ու չնայած ԱԺ միջանցքներում կոալիցիոն եռյակը դեռ դրսեւորում է ցուցադրական «ջան ու ջիգյարը», սակայն ներսում բորենիական հարաբերություններ են: Այսպես երեկ «Փակագիծ» ակումբում արտահայտվեց ԱԺ պատգամավոր Մանուկ Գասպարյանը: Նա հավաստիացրեց, որ վաղուց գարշահոտ է զգում խորհրդարանից, որտեղ ընդդիմությունն անպտուղ բոյկոտ է անում, իսկ մյուս թեւը՝ խոտան արտադրում. «Նոր տարուց առաջ 60-70 օրինագիծ բերեցին, շբփ-թբփ բրդեցին-անցկացրին: Մեր ընդունած օրինագծերի 80 տոկոսը բռակ է: Կոալիցիայի ոչ մի կուսակցություն չի աշխատում այն օրինագծերի վրա, որոնք կարող են շոկել մեր քաղաքական իրավիճակը: Բոլորը խաղում են ու դրանից տուժում է ժողովուրդը»:

Տուժող ժողովուրդն էլ, Գասպարյանի կարծիքով, պահանջում է այն, ինչ ընդդիմությունը՝ պաշիժ հանցագործներին եւ իշխանափոխություն: Այդ համակարծությունը, սակայն, հաջողության երաշխիք չէ: Հայրենական ընդդիմության որեւէ կարկառուն դեմք չի արժանացել «ռուսական, ամերիկյան կամ եվրոպական քամիների» ուշադրությանը: Արտերկրի ուժերը մեր երկրի քաղաքական էլիտայում չեն գտնում համապատասխան ու զորեղ ընդդիմադիր առաջնորդի եւ այդ պատճառով էլ ոչինչ չեն ձեռնարկում: Իսկ առանց արտաքին ուժերի ձեռնարկումների մեր ընդդիմությունը, բանախոսի հավաստմամբ, շարունակելու է մնալ անկարողի կարգավիճակում: «Եթե անգամ դրսում լիդեր են գտել, որտեղ այդ անձնավորությունն անհրաժեշտ հեղինակություն չի վայելում եւ թիմ չունի: Եթե դրսի աջակցությունը չուներ, չէր կարողանալու գործընթացը մինչեւ վերջ տանել: Որտեղ ժողովրդին մի հանեք դուրս ու հուսախաբ արեք», խորհուրդ տվեց Մանուկ Գասպարյանն ու մի տեսակ ստահովանի հաղորդելու պես հայտարարեց, որ անկախ ամեն ինչից «տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրությունները վերջնականապես կկոտրեն կոալիցիայի ողնաշարը», քանի որ գաղափարական ընդհանուր հենք չունեցող կոալիցիոն երկու ուժերը՝ ՕԵԿ-ն ու ՀՅԴ-ն առիթ-անառիթ տրտնջում են իշխանության գործելակերպից, չտրտնջացողի կարգավիճակը դեռ շարունակում է պահպանել ՀՅԿ-ն: Սակայն երբ կուսակցություններում էլ ավելի շատ են նրանք, ովքեր հանուն իշխանության գլուխ մնալու պատրաստ են թողնել կուսակցական պատկանելությունը, քան հավատարմություն դրսեւորողները: Իսկ այս համատեքստում, Գասպարյանի կանխատեսումներով, ՏԻՄ ընտրություններին ընդդիմությունը չի մասնակցի, ՕԵԿ-ը լայն եւ արդյունավետ գործունեություն կծավալի այդ ընտրություններում, ՀՅԿ-ն իր բաժնին տեր կկանգնի, ՀՅԴ-ն էլ կփորձի հանրապետության կարետր քաղաքներում իր ներկայացուցիչներն ունենալ: ՄԱԿ-ի եւ Ժողովրդավարության բաժինը ՏԻՄ ընտրություններում ավելի մեծ կլինի, քան ընդդիմության սանձալիքը:

Ի վերջո, բարձրյալի «դոբրոների» բաշխումից դժգոհ կոալիցիայի ողնաշարը վերջնականապես կկոտրվի եւ բուժիչ ու վերականգնող դեր չի սանձնի անգամ Ռոբերտ Քոչարյանի լոեցնելու կարողությունը: Այսպիսով բանախոսի կանխատեսումների տողատակում կարելի է ընթերցել հետեւյալ համոզմունքը, որ Հայաստանում ներկա իշխանությունների ինքնաոչնչացմամբ կապահովվի հարաբերական իշխանափոխություն: Իսկ նման իշխանափոխությունը Գասպարյանը հարաբերական է համարում, քանի որ, ըստ նրա, ՀՀ հնարավոր հաջորդ թեկնածուները կարող են լինել Սերժ Սարգսյանը, նրա չլինելու դեպքում՝ Աղվան Հովսեփյանը, Արթուր Բաղդասարյանը, Անդրանիկ Մարգարյանը եւ Քոչարյանին ամենից հավատարիմ Երվանդ Զախարյանը: Դավիթ Հարությունյանի թեկնածությունն այս ցուցակում Գասպարյանը բացառեց, քանի որ վերջինս իր կրթվածության արդյունքում պահանջված կլինի ամեն մի իշխանության կողմից. «Ով էլ գա իշխանության գլուխ, Դավիթ Հարությունյանին կտա «սեւ կարդինալի» դերը: Ինքը կարդացած տղա է ու այդ գործը լավ կանի»: Արթուր Բաղդասարյանը, սակայն, Գասպարյանի համոզմամբ, ներկայիս իշխանություններից չի ստանա ՀՀ նախագահ դառնալու «դոբրոն», քանի որ վերջինիս չեն վստահի ներկայիս մեղավորներին չպատժելու խնդրում:

Կանխատեսումների իր ցանկը Մանուկ Գասպարյանը փակեց հետեւյալ եզրակացությամբ. «Նախկին խորհրդային տարածքում ամեն մի իշխանավոր երկրորդ «սրոկը» պիտի անցկացնի ուղղիչ աշխատանքային գաղութում»:

ՆԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հ. Գ.- Հայրենական քաղաքական անդամության մյուս ներկայացուցիչներից Մանուկ Գասպարյանը չտարբերվեց եւ կանխատեսումները ներկայացնելու հնարավորությունը, ինչպես եւ վերջին ժամանակահատվածում հանդես եկող նրա գործընկերները, օգտագործեց նաեւ որպես ընտրարավի բաղկացուցիչ մաս՝ չմոռանալով հընթացս բազմիցս հավատել, որ հայտնում է իր սուբյեկտիվ կարծիքը:

ԺԱԿ ՎԱՆՏՈՄԻ ԱՍՈՒԼԻՍԸ

Հայաստանը ներգրավվեց Եվրոպական հարեւանության քաղաքականության մեջ

Մնում է մշակել գործողությունների ծրագիր

Վրաստանում եւ Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության առաջին տեղակալ Ժակ Վանտոմի հրավիրած ասուլիսը վերաբերում էր Եվրոպական հարեւանության քաղաքականությանը Հայաստանի միանալու որոշմանը:

2004 թ.-ի հունիսին Հայաստանը ներկայացրած դիմումի համաձայն եւ Եվրոպական հանձնաժողովի առաջարկությամբ Ադրբեջանի եւ Վրաստանի հետ ներգրավվեց Եվրոպական հարեւանության քաղաքականության մեջ: Այդ ժամանակ էլ որոշվեց պատրաստել մի զեկուցագիր, որը ցույց կտար, թե արդյոք ժամանակն է այդ երեք երկրները Եվրոպական հարեւանության քաղաքականությանը միանալու:

Ժակ Վանտոմի ներկայացմամբ, մամուլի ասուլիսի հրավիրման հիմնական գաղափարն այն էր, որ մարտի 2-ին Եվրոպական հանձնաժողովը կայացրել է որոշում Հայաստանին նվիրված տարածաշրջանային զեկույցի հիման վրա, որը համապարփակ տեղեկություն է տրամադրում Հայաստանի քաղաքական, տնտեսական իրավիճակի եւ Եվրամիության հետ երկկողմ հարաբերությունների վերաբերյալ:

Պրն Վանտոմը նշեց, որ այս ամենի հիման վրա բանակցությունների ընթացքում պետք է մշակվի գործողությունների ծրագիր Ուկրաինայի եւ Մոլդովայի մոդելներով: Գործողությունների ծրագրի հիմնական նպատակն է լինելու դեմոկրատական կառույցների եւ բազմակարծության օրենքի նորմերի ամրապնդումը (ընտրական օրենսդրական, սահմանադրական, տեղական ինքնակառավարման բարեփոխումներ, ժողովրդավարական ընտրությունների անցկացում եւ այլն):

Նպատակների առումով Ժակ Վանտոմն ընդգծեց մարդու իրավունքների եւ ազատությունների ամրապնդումը առավելապես խոսքի եւ հավաքների ազատության բնագավառում: Գործարար շրջանակների բարելավման եւ հանրային սեկտորի արդիականացման, կոռուպցիայի դեմ պայքարի, հարկային եւ մաքսային կառավարման բարեփոխումների, աղքատության կրճատման, կայուն զարգացման եւ շրջակա միջավայրի պահպանության հետ մեկտեղ գործողությունների ծրագրի հիմնական նպատակներից են նաեւ Մեծամորի ատոմակայանը շահագործումից հանելը, կոնֆլիկտների լուծումն ու խորացված տարածաշրջանային համագործակցությունը: Վերջին երկուսը, Ժակ Վանտոմի ներկայացմամբ, հատուկ են Հայաստանին:

Ինչ վերաբերում է այն սկզբունքներին, որոնց հիման վրա Հայաստանը հնարավորություն է ստացել ներգրավվելու Եվրոպական հարեւանության քաղաքականության մեջ, պրն Վանտոմը պարզաբանեց, որ Հարավային Կովկասի 3 երկրները առաջին փուլում ընդգրկված չէին այսպես կոչված «ավելի լայն Եվրոպա» ծրագրի մեջ, բայց հետագայում նրանց հարցը քննարկվեց եւ կայացվեց որոշում:

Ադրբեջանի հետ հարեւանության ծրագրի մեջ ընդգրկվելու պարագայում շարունակվող շրջափակման պայմանների առնչությամբ Ժակ Վանտոմը կրկին նշեց գործողությունների ծրագրի հիմնական նպատակներից մեկը, որ վերաբերում էր կոնֆլիկտների լուծմանն ու խորացված տարածաշրջանային համագործակցությանը: Պրն Վանտոմը ասաց նաեւ, որ Հայաստանի վերաբերյալ զեկույցում նշված են Լեռնային Ղարաբաղի հետ կապված բոլոր զարգացումները:

Զեկույցում նշված է նաեւ, որ Եվրամիությունը տարածաշրջանում իր ներկայացուցչի կողմից առաջարկելու է քաղաքական աջակցություն ԵԱՀԿ Մինսկի աշխատանքներին: «Բայց ընդհանրապես ես կուզեի ասել, որ Եվրոպական հարեւանության քաղաքականության մեջ այս երեք երկրների ներգրավման քաղաքական որոշմամբ Եվրամիությունը մեծացնում է իր ներգրավվածությունը տարածաշրջանում եւ դառնում է համատեղ պատասխանատու՝ լուծումներ գտնելու հարցում օգնելու իմաստով», ասաց Ժակ Վանտոմը:

Ինչպես, գործողությունների ծրագրի առումով Եվրամիություն - Հայաստանի կառավարություն բանակցությունները դեռ առջեւում են: Ինչ վերաբերում է Հայաստան - Թուրքիա հարաբերությունների կարգավորում փակ սահմանին, արդյոք պրն Վանտոմը հույս կապարեց վերը նշված զեկույցին, որում հայ-թուրքական հարաբերությունները հատկապես բարդ են բնորոշված:

Զեկույցում, ըստ պրն Վանտոմի, նշված է նաեւ, որ «այս երկրների միջեւ գոյություն ունեն զգայուն, չլուծված մի շարք հարցեր, որոնցով պետք է զբաղվել փոխադարձ հարաբերությունների բարելավման տեսանկյունից»: Ժակ Վանտոմի համար ակնհայտ է, որ 2004 թ. հոկտեմբերի 3-ին Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության բանակցություններ սկսելու որոշումից հետո «պետք է դրամ (Հայաստանը - Ա.Հ.) լայն ենթաստեղծում ընկալեք Եվրամիությանը Թուրքիայի անդամակցությունը, որը կարող է միմիայն օգտակար լինել Հայաստանի համար»:

Մեծամորի ատոմակայանը շահագործումից հանելու նպատակադրման առնչությամբ Ժակ Վանտոմը կրկին անդրադարձավ Հայաստանի վերաբերյալ զեկույցին, որում էներգետիկ ոլորտն ընդգրկում ներկայացված է: Ատոմակայանի առումով արված է նախկին առաջարկությունը էներգիայի այլընտրանքային աղբյուրների համար 100 մլն եվրո գումար տրամադրելու մասին: Նշենք, որ ատոմակայանի փակման դեպքում դրան հավասարազոր այլընտրանքային էներգիայի հզորություններ ստեղծելու համար Հայաստանին անհրաժեշտ է 1 մլրդ դոլար:

«Մինչեւ այժմ չկա հստակ մի օր ատոմակայանի փակվելու եւ նոր հզորություններ գործարկելու կապակցությամբ», ասաց Ժակ Վանտոմը: Նա նշեց, որ այս առումով զեկուցագրում նշված են ՀՀ կառավարության երեք մտահոգությունները: Նախ, նոր ստեղծվող հզորությունները պետք է բավարարեն էներգիայի ակնկալվող կարիքները, երկրորդը էներգետիկ անվտանգության խնդիրն է: Երրորդ մտահոգությունը վերաբերում է ատոմակայանի փակման դեպքում էներգետիկ սակագների վրա բացասական հնարավոր ազդեցությանը:

Ամեն դեպքում, ըստ Ժակ Վանտոմի, Եվրամիությունը հավի է առնելու նշված հարցերը: Իսկ գործողությունների ծրագիրը կներառի բոլոր հիշատակված հարցերը: Եվրամիության եւ հանձնաժողովի ներկայացուցչության կապակցությամբ պրն Վանտոմը ասաց, որ Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի գրասենյակը շուտով կստանա լիիրավ դիվանագիտական կարգավիճակ:

Կարս-Ախալքալաք երկաթգծի կառուցման մեջ Եվրամիության մասնակցության առումով Ժակ Վանտոմը չկարողացավ կոնկրետ պատասխան տալ:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանի նոր ուսումնական տարվա սկիզբը

Փոփոխություններ, ուսանողական վարկային ծրագրեր

Հայաստանի ամերիկյան համալսարանի գործունեության 14 տարիներին շուրջ 1400՝ տարբեր մասնագիտություններով շրջանավարտների (արդյունաբերական ճարտարագիտություն եւ համակարգերի կառավարում, համակարգչի եւ տեղեկույթի գիտություն, գործարար կառավարում, հանրային առողջապահություն, իրավագիտություն, համեմատական իրավական ուսումնիներ, հաղորդագիտություն, անգլերենի դասավանդումը որպես օտար լեզու) գերակիռ մասը (մոտ 80 տոկոս) այսօր ներգրավված է Հայաստանի տնտեսական եւ հասարակական կյանքի զանազան ոլորտներում: Մեր հանդիպման ընթացքում ՀԱՀ-ի նախագահ Հարություն Սոմենյանը վստահեցրեց, իբրեւ XXI դարի եզակի կառույց: Արդեն սկսված շինարարական աշխատանքները հոգեբանորեն, ոգեւորող բնույթ ունեն նաեւ, որ ենթադրում է համալսարանական մթնոլորտի ապագա փոփոխությունների իրականացում:

Հայաստանի ամերիկյան համալսարանը հայկական իրականության մեջ առաջինն էր, որ ստեղծեց ուսանողական փոխառությունների համակարգ, որը գործում է ավելի քան 2 տարի: Նյութական սուղ միջոցներ ունեցող ուսանողներին հնարավորություն է ընձեռված օգտվելու ուսման վարձի աջակցության, դրա մասնավճարով մուծման եւ փոխառության (վարկային) ծրագրերից: Վերջինը կարճաստեւ եւ երկարաժամկետ վարկային օգնություն է տրամադրում ուսանողներին, ընդ որում վարկերը վերադարձնելու ժամկետները սահմանված են ոչ միայն ուսման տարիներին, այլեւ ուսումնառության ավարտից հետո մեկուկես տարվա ընթացքում (ամբողջությամբ կամ մաս-մաս), այսինքն՝ աշխատանքային ապահովվածությամբ: Վարկային այս ծրագիրը ուսման շարունակություն տալու հնարավորությունից բացի, կարետրվում է երիտասարդներին իմնավստահություն, իմնուսկնություն եւ հասունություն ներշնչող հանգամանքներով:

Համալսարանում հաստատագրված կրթավճարը կազմում է 6000 ԱՄՆ դոլար, սա՝ արտերկրի ուսանողների համար, որ կազմում է փոքր քանակություն (5-10 տոկոս), հայաստանցի ուսանողների համար արդեն 3-րդ տարին արձանագրված է հաստատուն գումար՝ 1750 դոլար, ինչն այլ երկրների նմանաբնույթ կրթության համեմատությամբ բավականին մատչելի է (օրինակ, Բեյրութի ամերիկյան համալսարանում դա 12.000-14.000 դոլարի սահմաններում է, բժշկության ոլորտում՝ 26.000 դոլար, սա վերաբերում է նաեւ ԱՊՀ երկրների ամերիկյան համալսարաններին):

Անցած ուսարում համալսարանում ներդրվեց «Թուտֆանջյան ընտանեկան հիմնադրամի» կրթաթոշակի ծրագիրը՝ սահմանել կրթաթոշակային կարգ ծնողազուրկ, 1988-ի երկրաշարժից տուժածների, նաեւ սոցիալապես անապահով խավի ուսանողների համար. այս նպատակով նախատեսված է 1 մլն դոլար 10 տարիների ընթացքում: Անցած տարի ծրագիրը հոգացել է 147 ուսանողի ուման, որի 10 տոկոսը՝ ՀԱՀ-ի, մնացածը այլ բուհերի ուսանողների ծախսերը: «Թուտֆանջյան ընտանեկան հիմնադրամի» կրթաթոշակային ծրագրի, որ ընդգրկում է հայաստանյան բուհական համակարգը, վստահությունն ըստ էության առաջացավ Հայաստանի ամերիկյան համալսարանի փորձից հետո միայն:

Ուսանողական աջակցությունը ՀԱՀ-ում չի սահմանափակվում միայն նյութականով: Փորձ է արվում իրականության կոչել «Մեծ եղբայր, մեծ քույր» ծրագիրը, որի էությունը Թուտֆանջյան կրթաթոշակ ստացող ուսանողների նկատմամբ ՀԱՀ-ի շրջանավարտների՝ ավագների վերահսկողությունը, ուման ընթացքին հետեւելը, հոգատար վերաբերմունքն է (հատկապես կարեւոր՝ ծնողազուրկ ուսանողներին, նաեւ մարդկային փոխհարաբերությունների եւ հոգեբանության վերափոխման տեսակետից):

- Հայկական իրականության համար նորություն մը չէ, կիիեմ Պոլտ մեջ ֆիչ մը ինֆզինֆ հանգիստ զգացող մարդը միշտ պարտականություն ստանձնած էր աղքատ երեխա մը վերցնելու, կնքահայրություն ընելու: Ասիկա մեր շրջանավարտներուն կսովորեցնե, որ իրենց անհատական եսեն անդին կարողանան ապրիլ: Մեր նպատակը մեծ թիվով ուսանող ունենալը չէ: 1400 շրջանավարս ունինք, որ փոքր երկրի համար ֆիչ թիվ չէ, նաեւ աշխատանքի տեսակետեն: Մեր շրջանավարտներու 75 տոկոսը Հայաստանի մեջ կաշխատի, կան նաեւ ուսանողներ, որ ԱՄՆ կերթան զանազան ենթամասնագիտություններու համար: Հոս կարեւոր հանգամանք մը կա, թե կրթական ասպիճաններու վրա ուսանողը որչափ կբարձրանա: Եթե դոկտորական մը ըրավ, որ շատ նեղ մասնագիտություն է եւ Հայաստան գործ չպիտի գտնե, հոն՝ ԱՄՆ կմնա, եւ չես ալ կրնար այդ երիտասարդին ձեռը կարել, չես գիտեր՝ հետագային ինչ օգուտ կրնա բերել Հայաստանին:

Մենք որպես հաստատություն Հայաստանի ամերիկյան համալսարան ենք, այսինքն՝ Հայաստանը առաջ կուգա եւ այդ մտահոգությամբ կնավալենք մեր գործունեությունը, ըլլա Ղարաբաղ թե Հայաստան՝ «Նորք-Մարաշ», թե Թվային գրադարան, թե բիզնես ծրագիրները: Առհասարակ այս համալսարանը մեջտեղ եկավ զոհողություններու, նվիրատվություններու ձեւով: Երբ պրոֆեսորներու կամ ղեկավար անհատներու ընտրություն կկատարենք, մեզի համար կարեւոր է՝ ինչ է իրենց, այսպես կոչված, միտիայի գիտակցությունը, այս գործին կմոտենան որպես պաշտոնի, թե՞ առաքելության: Անկեղծորեն այս մոտեցումով ոչ հայ ուսուցիչներ, պրոֆեսորներ ունինք, որոնք նույնքան կոչված են այդ առաքելության զգացումով: Առաքելության հարցը պարտավորություններն զատ ինձի համար շատ կարեւոր է, որովհետեւ երկիր կառուցելը միայն նշխար մը տալով չի վերջանար: Երկիր կառուցելը հետեւողական տասնամյակներու վրա երկարող աշխատանք է, այդ զգացումով պետք է մոտենալ, եւ մեր համալսարանը փոքր մաս մըն է այդ ճիգեն,-ասում է Հարություն Սոմենյանը:

ՄԵԼԻՆԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Մաթեմատիկայի գծով միջինից բարձր ենք, բայց...

Արդեն 15 տարի հումանիտար եւ տեխնիկական առարկաների գծով ամեն տարի աշխարհի գրեթե բոլոր երկրների մասնակցությամբ հանրակրթական դպրոցներում իրականացվում է միջազգային ստուգատես: Դա նշանակում է, որ մրցույթին մասնակից բոլոր երկրներում 4-8-րդ դասարանների աշակերտները (ներառվում է տվյալ երկրի աշակերտության 10 տոկոսը) գիտելիքների ստուգում են անցնում: Նպատակը, իհարկե, տվյալ երկրի հանրակրթական միջին սերնդի կրթական ունակությունների ստուգումն է:

Անցյալ տարի միջազգային ստուգատեսին առաջին անգամ մասնակցեցին նաեւ Հայաստանի 150 դպրոցների 600 աշակերտներ մաթեմատիկայի եւ բնագիտական 4 առարկաների (ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, կենսաբանություն) գծով: Մրցույթն անցել է բոլոր երկրների համար համանման թեստային ծրագրով:

Մրցույթի արդյունքները արդեն ամփոփվել են, ստացվել է նաեւ Հայաստանի վերաբերյալ հաշվետվությունը, որն այնքան էլ հաճելի չէ մեզ համար:

Հայաստանը մաթեմատիկայի գծով բարձր է աշխարհի միջին ցուցանիշից (մրցույթին մասնակցել է 50 երկիր), բայց բնագիտական առարկաների գծով ցածր է միջինից: «Թեստերն ավելի շատ երեխաների տրամաբանությունը, քան թե փաստացի գիտելիքը կամ դրա կիրառումը ստուգելու նպատակ ունեին: Մյուս կողմից դպրոցներում եւս այս միջոցառման նկատմամբ անփույթ վերաբերմունք հանդես բերվեց», ցածր ցուցանիշներն այսպես է պատճառաբանում կրթական ծրագրերի կենտրոնի տնօրեն Կարինե Հարությունյանը:

Կ.Դ.

Իրենք բերում են, իրենք էլ տանում

Մեր ուսուցիչների վերապատրաստման առաքելությունը, որքան էլ տարօրինակ է, իրականացնելու է Բրիտանական կամ լոնդոնյան ուսուցիչների կենտրոնը: Այն Անգլիայի կրթության նախարարությանը ենթակա հասարակական կազմակերպություն է, որը ողջ աշխարհում լայն գործունեություն է ծավալել: Այս խորհրդատվական ընկերությունը մրցույթում հաղթել է Համաշխարհային բանկի սահմանած մրցութային ընթացակարգով: Ընտրության գլխավոր չափորոշիչներն են եղել՝ որակ, փորձ եւ գին: Բրիտանական կամ լոնդոնյան կազմակերպությունը աշխատել է նաեւ Սլովենիայում, Չեխիայում, Կենտրոնական Եվրոպայի երկրներում: Այս ընկերությունը վերապատրաստելու է մեր ուսուցիչներին բոլոր առարկաների գծով, բացի մայրենիից:

Հենց Համաշխարհային բանկն էլ ֆինանսավորում է վարկային կրթական ծրագիրը:

Խորհրդատվական մյուս ընկերությունը, որ հաղթել է մրցույթին մասնակից օտարերկրյա՝ ֆիննական, հոլանդական, ամերիկյան կազմակերպություններին, Քեմբրիջի համալսարանի գնահատման կենտրոնն է:

Կենտրոնի ներկայացուցիչները աշխատել են նաեւ ԱՊՀ այլ երկրներում:

Նրանք հայ ուսուցիչներին ուսուցանելու են թեստային թեորիան՝ թեստեր կազմելու միջազգային սկզբունքները: Նրանց աշխատանքային լեզուն անգլերենն է, հայ ուսուցիչները եվրոպական իմաստություններին հաղորդակից են լինելու զուգադիր թարգմանությունների միջոցով:

Վարկային միջոցների 3,5 տոկոսը նախատեսված է արտասահմանցի խորհրդատուներին վարձատրելու համար:

Թե սովորաբար ինչպիսի արդյունք են ունենում նման սեմինարներն ու խորհրդատվությունները, ոչ ոք չի ուսումնասիրել: Նման չափանիշներ ոչ ոք եւ երբեւէ չի սահմանել: Եվ բացառված չէ, որ դրանցից շատերը վերածվում են դատարկ ժամվաճառության:

Խնդրահարույց է նաեւ 50-ն անց կամ արդեն օպտիմալացված մյուս ուսուցիչների վերապատրաստումը եվրոպական կրթական սկզբունքներով: Կամ որքանով այդ «պատվաստումները» համատեղելի են կամ կլինեն մեր կրթական միջավայրում, ոչ ոք չի կարող ասել: Վերջին տասնամյակում նման փորձարարությունների ներմուծումներից կրթական համակարգը միայն տուժեց:

Կ.Դ.

Ինտերնետը զարգանում է նաեւ ուսանողների շնորհիվ

Օրերս Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանողները իրականացրին մի մրցույթ, որի շնորհիվ հայկական ինտերնետը հարստացավ եւս 10 կայքերով:

«Ինտերնետը ավելի արագ ու էժան տեղեկատվություն տարածելու եւ հաղորդակցության ձեւ է, վստահ եմ, որ մի օր շատերն են այն գերադասելու հեռուստատեսությունից կամ մամուլից: Այսպիսի աշխատանքները զարգացնում են հայկական ինտերնետը», ասում է առաջին կուրսի ուսանողուհի եւ մրցույթի երրորդ տեղի մրցանակակիր խմբի անդամ **Անուշ Դուլգարյանը:** Նրա խմբի պատրաստած վեբ-կայքը ծղոտային շինարարության մասին է, որ անհամեմատ էժան, սեյսմակայուն եւ հրակայուն է: Անուշն ուրախությամբ է նշում նաեւ, որ արդեն ստացվել է իրենց աշխատանքների առաջին արձագանքը: «Մեզ արձագանքել են կույր երիտասարդների միությունից, որոնք խնդրել են ստեղծել իրենց վեբ-կայքը: Սիրով ենք աջակցելու այդ բարեգործական նախաձեռնությանը, որը կարող է օգնել կույր երիտասարդներին լսելի եւ հասանելի լինելու բոլոր բարեգործների համար», ասում է Անուշը:

Հռիփսիմե Զանգիրյանը համակարգչային արագացված դասընթացի դասախոս է: Նա գտնում է, որ չորս շաբաթում կարելի է ուսանողներին տալ այնքան գիտելիք, որ նրանք մեկ շաբաթում պատրաստեն վեբկայք, դրանով գումար վաստակեն ինտերնետային մեծ շուկայում կամ ստեղծեն իրենց սեփական վեբ-կայքերը: Իր հերթին համակարգչային դասընթացի կազմակերպիչ **Մարտին Մինասյանը** նշում է. «Մրցույթի թեման ազատ է, եւ այդ առումով շատ անսպասելի թեմաներ են ընտրում մեր ուսանողները՝ լուսնից մինչեւ Հայաստանի թռչունները, պոեզիան կամ ադամանդագործությունը: Մեծ առավելություն ենք համարում այն, որ այդ սայթերը հնարավորություն ունենք տեղադրելու մեր համալսարանի կայքում եւ մատչելի դարձնելու ողջ աշխարհին», ասում է Մ. Մինասյանը: Նա նաեւ նշում է. «Այս տարի մեր համալսարանից մոտ քառասուն ուսանողներ մասնակցեցին այս մրցույթին: Հրավիրել էինք նաեւ այլ բուհերի ուսանողների, ժյուրիի եւ հրավիրված հանդիսատեսի միջոցով ընտրվեցին երեք լավագույն կայքերը: Ի վերջո, մեր աշխատանքի նպատակն է նպաստել բուհական փոխհամագործակցությանը եւ հայկական ինտերնետը առավել բովանդակալից դարձնել»:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հրապարակում

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻԺԻ

ՈՒ Ղ Ե Ր Ձ

ՀՀ Նախագահին, ՀՀ կառավարությանը, ՀՀ Ազգային ժողովին և Բովանդակ Հայ Ժողովրդին

Երեվան, 3 Մարտ 2005

«Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտը»՝ ՄԻԺԻ-ն դուրս է գալիս Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագրի (ԱՀՌԾ) այսպես կոչված «համակարգման և գործընկերային» բոլոր կառույցներից և ինստիտուտներից:

- Միաժամանակ՝ մեծ կարևորություն տալով աղքատության հաղթահարման պետական քաղաքականության անհրաժեշտությանը,
- մանավանդ հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության պետական ծրագրերի և պետական բյուջեի գերակշիռ մասը կազմում է հենց ԱՀՌԾ-ն
- ՄԻԺԻ Հայաստանյան ոչ կառավարական կազմակերպությունը, լինելով մեր պետության մեջ ԱՀՌԾ գործընթացների ուղղությամբ իր ինքնուրույն և հստակ դիրքորոշմամբ հանդես եկող ու նաև այդ պետական գործընթացներում իր ներդրումը ինքնուրույն և մեր պետական շահերից ելնելով հետապնդող հիմնական քաղաքացիական կառույցներից մեկը,

ՄԻԺԻ-ն մնում է հաստատակամ. մենք առավել խստացնելու ենք մեր սթափ և հանձնառու գործունեությունը աղքատության հաղթահարմանը ուղղված հանրային պետական քաղաքականության առանցքային վերանայման, վերամշակման, իրականացման և վերահսկողության աշխատանքներին և գործընթացներին մեր պետականության մեջ:

ՄԻԺԻ-ն իր կազմակերպության մեջ իսկ, քաղել է հիմնական և ցավոտ դասերը վերջին՝ մանավանդ 3 տարիների ընթացքին այս գործընթացներին իր մասնակցության առնչությամբ: Այսպիսով ՄԻԺԻ-ն կատարել է առանցքային փոփոխություններ իր իսկ կազմակերպության ներսում կանխելով որևէ խափանում ՄԻԺԻ-ի որդեգրած առանցքային սկզբունքներից՝ իբր ինքնուրույն քաղաքացիական կառույց :

2001թ.-ից սկսյալ ՄԻԺԻ-ն նախաձեռնել և ներգործուն մասնակցություն է ունեցել և իր դիրքորոշումներով հանդես է եկել նոր սկզբնավորվող և զարգացող աղքատության հաղթահարման հանրային քաղաքականության գործընթացներին:

ՄԻԺԻ-ն աղքատությունը Հայաստանում դիտարկում է որպես **քաղաքական և հանրային կառավարման և ոչ զուտ տնտեսական հիմնախնդիր**:

Աղքատության պատճառները Հայաստանում ՄԻԺԻ-ն շարունակում է գնահատել՝

ա. պետական հանրային քաղաքականության առանցքում մարդու՝ որպես ազատ ու ստեղծագործ էակի գնահատման և արժևորման բացակայության մեջ

բ. Հայ ժողովրդի՝ ԲՈԼՈՐԻ բաղձանքները և շահերը անձնավորող, հայեցակարգի բացակայության մեջ,

գ. հասարակության փոխհարաբերության մեջ հավասարության, արդարության և հիմնական մարդկային սկզբունքների և իրավունքների բացակայության մեջ

դ. հասարակության տնական զարգացմանն ուղղված համակեցության, համերաշխության և սոլիդարության **իրական ժողովրդավարական սկզբունքային մեկնակետերի և մոտեցումների բացակայության մեջ**:

▼▼▼

Անդամակցելով ԱՀՌԾ կառույցներին՝ ՄԻԺԻ-ն մտածել էր, որ կարող էր ազդել աղքատության հաղթահարման հանրային քաղաքականության գերակայությունների վրա: Սակայն իր չորսամյա աշխատանքի և իր հետ գործընկեր մյուս հասարակական կառույցների կազմակերպված մասնակցային գործընթացների արդյունքում ամրագրվել է առաջարկված սկզբունքներից միայն մեկը՝ «աղքատության կրճատում» հասկացությունը փոխարինվել է «աղքատության հաղթահարում» հասկացությամբ:

ՄԻԺԻ-ն արծարծել և վեր է հանել 2001թ.ից սկսած և ամբողջ ընթացքում մինչև հաստատումը (2003թ. օգոստոսի 8-ին ՀՀ Կառավարության թիվ 994/Ն որոշմամբ) ջանացել է ազդել և նպաստել ՄԵՐ ժողովրդի համար կարևոր այս պետական քաղաքականության հանրանպաստությանը և հանրանվիրությանը: Սակայն ՄԻԺԻ-ի և իր մասնակցային գործընթացներից առաջադրված բոլոր մյուս փորձերը՝ ԱՀՌԾ գերակայություն դարձնել արդար վերաբաշխումը, հավասար հնարավորությունները բոլորի համար, վերջնական իմաստով դուրս են մնացել պետության աղքատության հաղթահարման ռազմավարությունից:

Հանրային քաղաքականության և կառավարման հայեցակարգի վերոհիշյալ հիմնական սկզբունքները չեն կազմում ներկա ԱՀՌԾ պետական ռազմավարության և ծրագրի առանցքը: Այդ ամենը մերժվել է վերջնական թղթածրարը որոշում դարձնելու պահին: 2003թ.-ի Օգոստոսին իշխանությունների կողմից հաստատված ծրագիրը չի որդեգրել մասնակցային այս հիմնական սկզբունքները և վտանգել մեր ներքին սոցիալ- տնտեսական ավտանգությունը: Այդուհանդերձ, ՄԻԺԻ-ն այլ հասարակական կազմակերպությունների շարքին ահազանգելով իսկ փորձել է հավատալ, որ այդուհանդերձ պետք է շարունակել ներսից ազդել այդ պետական ծրագրի իրականացման ուղությունները փոխելու և այն մեր հասարակության նպաստին վերածելու համար: Սակայն վերջին մեկ տարվա փորձը, այս բոլոր այսպես կոչված "համակարգման և գործընկերային" կառույցների կյանքի կոչումը, գործընթացների մշակումը և դրանց իրական գործառնությունը մինչ այսօր մեզ հանգեցրել են հետևյալ եզրակացություններին՝

1. Աղքատության հաղթահարման ներկա ծրագիրը, գործընթացները և գրավոր հաշվետվությունները/ վերջինը 2004թ օգոստոս/ հիմնականում ուղղված են արտաքին կառույցներին, ինչպիսին է Համաշխարային Բանկը և այլն,... հաշիվ տալուն և բավարարելուն և ոչ թե յուրային հայ ժողովրդին:
2. ԱՀՌԾ ներկա կառույցները և մեխանիզմները կոչվում են «գործընկերային և մասնակցային»: Դրանք արդյունքն են 3 տարվա տեսական, թղթային, փորձագիտական աշխատանքների, մտային մարզանքի և պետական ծախսերի: Փոխանակ այդ գումարները և էներգիան ուղղվեր մարդկային, հասարակական և պետական իրավիճակը գործնական բարելավելուն: Դրանք հիմնականում ձևական և մակերեսային են. պահում են զուտ մասնակցային ձևը և իբր թե հասարակության բոլորը խավերը ներառված են և համապատասխան ներկայացված, ներգրավված են և հավասար ձայնի իրավունք ունեն՝ որոշումներ կայացնելու: ԱՅԴ ԱՅԴՊԵՍ Չէ:

Այդ բոլորը իրական լինելու համար անհրաժեշտ է հավասար և արդար ուժերի ձևավորում և բաշխում: Սակայն իրականության մեջ այդպես չէ: Թղթի վրա ուժերի հավասարությունը դեռևս չի նշանակում իրականում հավասար ուժերի բաշխում, իսկ ներկայացուցչական հանգամանքը ևս թերի է և չկարգավորված թե տեսական և թե գործնական իմաստով:Դա վտանգում է մեր երիտասարդ քաղաքացիական հասարակության ինքնուրույն և պետականամետ զարգացմանը:

Ներկա կառույցները միայն օրինականցնում /լեգիտիմացնում/ են իրական ուժայինի որոշումները՝ ձևացնելով, որ ընդունված են հասարակության և ժողովրդի բոլոր խավերի կողմից :

3. Այդ ձևական «մասնակցային և գործընկերային» կառույցները կրկնում են և վտանգում մեր նորաստեղծ պետության հիմանական ինստիտուտների ինքնուրույն և ներդաշնակ կայացմանը: Մենք ունենք ՀՀ Նախագահ, Ազգային Ժողով, Կառավարություն, քաղաքացիական հասարակություն իր երիտասարդ և կայացող ինստիտուտներով: Ներկա ԱՀՌԾ-ն, որը պետական նշանակություն ունի, և մեր պետական բյուջեի գրեթե ամբողջությունն է կազմում, ներկայացվում է իբր և *կոնսենսուսային* և համերաշխ գործընկերության արդյունք: Սակայն կան իշխանություններ, որոնք կոչված են ներկայացնել ժողովրդի տարբեր խավերի շահերը՝ հանձինս ՀՀ Նախագահ և Ազգային Ժողով և իրենց կողմից նշանակված կառավարություն, որոնք պարտավոր են իրենց բեռը կրել և հաշվետու լինել ժողովրդին: ԱՀՌԾ այս գործընթացներին իշխանությունները չեն զիջել իրականում իրենց ուժային և որոշում կայացնելու *մոնոպոլիան* և լիազորությունը. հասարակությունը պետք է այդ գիտակցի, ինքնակազմակերպվի և վերահսկի, որպեսզի իր իրավունքները լիարժեք պաշտպանվեն և իրագործվեն: ՀՀ Սահմանադրությունում ամրագրված են բոլոր իրավունքները և գործընթացները: Չբարդացնենք և չխճճենք բյուրոկրատական կրկնվող և ոչ օրինական /ոչ լեգիտիմ/ կառոյցներ ստեղծելով:

Հրապարակում

4. Ներկա կառույցները և գործընթացները նաև ձևական, բյուրոկրատացված, փորձագետների և վարչական քարտուղարությունների հսկողության արդյունք են: Այդ խավը աշխատում է հանձինս դրամաշնորհների և ԱՀՈԾ-ի և պետական բյուջեի: Նրանք իրենց որևէ կերպ ՀԱՇՎԵՏՈՒ չեն համարում հասարակությանը: 3-4 տարի շարունակ էներգիան և գումարները ծախսվել են ձևական կառույցներ, փորձագետների վճարներ, թղթային միջոցառումների և *մոնիտորինգի* ցուցանիշներ մշակելու, որոնք գործնականում չեն համապատասխանեցված Հայաստանի յուրահատկությանը և մնում են զուտ տեսական քննարկումների և փորձագիտական մտային մարզանքի մակարդակի վրա:
5. Աղքատության հաղթահարման պետական քաղաքականությունը և ծրագրերը փորձագետների խնդիրը չէ: Այն հասարակության և ժողովրդի տարբեր խավերի շահերի միջև պայքարի և համերաշխության խնդիրն է : Այդ տնտեսագետների ինքնագոհացման կոկեսը չէ, այլ պետական և հասարակական ԳՈՐԾԻՉՆԵՐԻ տքնաջան աշխատանքի և պայքարի կոկեսը պետք է դառնա:

Այս ամենի հիման վրա էլ ՄԻԺԻ-ն սկզբունքորեն սխալ է նկատում այլևս մասն դառնալու այդ կառույցներին, նույնացվելու */ասոցիացվելու/* և սխալի բաժին կրելու մեր ժողովրդի առջև: Մեր կարծիքով այդ համակարգի ներսից ՉԻ ԼԻՆԻ բան փոխել, ընդհակառակը, այդ օրինականացնում */լեգիտիմացնում/* է և նաև կարող է կոռումպացնել մասնակիցներին :

▼▼▼

Որպես մեր պետականության ներգործոն քաղաքացիական մասնիկ՝ ՄԻԺԻ Հայաստանյան ոչ կառավարական կազմակերպությունը

Ա/ պահանջում է մեր իշխանություններից՝ հանրային մանրամասն և ճշգրիտ հաշվետվություն, մամուլի մեջ տպագրված, թե՛ վերոհիշյալի և թե՛ հետևյալի մասին՝

1) 2000 թվականից, մանրամասն ի՞նչ ծրագրեր կամ միջոցառումներ են ձեռնարկվել ԱՀՈԾ շրջանակներում՝ հստակ նշելով որո՞նք են եկամուտների և ծախսերի աղբյուրները պետական բյուջեյից, դրամաշնորհների կամ վարկային միջոցներից:
2) Ովքե՞ր է եղել այս միջոցառումների իրականացնողները և գումարների հասցեատերերը:
3) Ո՞րն են այդ 3-4 տարիների աշխատանքների իրական արդյունքը աղքատների /պաշտոնական թվերով՝ Հայաստանի բնակչության 50 տոկոս-ի/ աշխատանքի հնարավորությունները զարգացնելու, նրանց կրթության և գիտելիքի զարգացումը ապահովելու. ընդհանրապես ՀՀ -ում մարդուժի զարգացման թե՛ պատրաստման թե՛ հնարավորությունների ընդլայնելու իմաստով:
4) Մանրամասն տեղեկացնել, թե ովքե՞ր են եղել փորձագետները, փորձագիտական կառույցները, վարչական պատասխանատուները, մանրամասն՝ ի՞նչ չափորոշիչներով են նրանք ընտրվել, ի՞նչ գործառույթներ են ունեցել և որո՞նք են նրանց աշխատանքների արդյունքները՝ աղքատների իրավիճակի փոփոխման իմաստով, ի հարկե, եթե կա փոփոխություն. ցույց տալ այդ կապը՝ *"իմպաքտը"*:
5) Ո՞րն է պետական բյուջեի մեջ ԱՀՈԾ բաշխումը: Ներկայացնել մանրամասն ցանկը պարտքերի, վարկերի, դրամաշնորհների :

Բ/ Մենք նաև պահանջում ենք միևնույն հաշվետվությունը Համաշխարհային Բանկից և որևէ արտաքին կառույցից, որ առնչվում է ԱՀՈԾ-ին ՀՀ պետության մեջ: Այդ կառույցները եթե որևէ ծրագիր իրականացնում կամ խթանում են ՀՀ-ում, ապա նրանք հաշվետու են հայ ժողովրդին: Դրամաշնորհ ընծայելը չի նշանակում անհաշվետվություն և անվերահսկելիություն: ԱՅՈ է ՊԱՀԱՆՋՈՒՄ պետության ինքնորոշման և անկախության սկզբունքը: Դա Միջազգային իրավական նորմ է և մենք պահանջում ենք որևէ արտաքին կառույցից, որ ՀՀ-ում քաղաքականություն և ծրագրեր է իրականացնում, այդ հաշվետվությունը հանրային և վերոհիշյալ մանրամասնությամբ ներկայացնել՝ ՀՀ ինքնիշխան պետությանը, իր ժողովրդին:

Մեր ժողովուրդը իրավունք ունի իմանալ այս հարցերի հստակ պատասխանը, ուստի մենք պահանջում ենք այս տվյալների անհապաղ հանրայնացումը անմիջապես:

Գ/ Մենք առաջարկում և ՊՆԴՈՒՄ ենք, որ ԱՀՈԾ բյուջեի բաշխման մեջ քիչ տեղ հատկացվի փորձագիտական վճարներին և վարչական ծախսերին, քանզի այս պետական ռազմավարության և ծրագրի հիմնական հասցեատերը աղքատ խավն է /պաշտոնական թվերով՝ Հայաստանի բնակչության 50 տոկոսը/, ուստի նրանց ուժեղացնելու և նրանց հնարավորություններ ընծեռնելուն պետք է ուղղվեն այս միջոցները և գումարները և ոչ թե փորձագետներին և ձևական կառույցների քարտուղարական և վարչական ծախսերին: /Այդ ծախսերը չպիտի անցնեն 20-25 տոկոս յուրաքանչյուր ծրագրի բյուջեի և նաև ընդհանուր ԱՀՈԾ բյուջեի/:

Հայաստանի Պետության համար սոցիալական բևեռացումը ազգային, պետական անվտանգության խնդիր է:

Դ/ ՄԻԺԻ-ն նաև խնդրում է ՀՀ նախարարություններին և այլ գործընկերներին մեր ազգի և հասարակության գործոններին՝ ԱՀՈԾ պետական ծրագրերի կյանքի կոչելու համար իրական ծրագրերի վերածել ներկայիս աղոտ միջոցառումների ցանկը, քանզի միայն հստակ ծրագրերի առկայության դեպքում է, որ թե՛ պետությունը, թե՛ հասարակությունը կարող են հստակ նպատակներ դնել և վերահսկել ակնկալվող արդյունքները: Անհրաժեշտ են՝ հստակ և հանրային չափորոշիչներ և գործառույթներ յուրաքանչյուր աշխատակցի և ծրագրի իրականացնողի ընտրության համար, Հայաստանի իրականության և յուրահատկությանը հարիր ցուցանիշներ յուրաքանչյուր ծրագրի և հստակ, մանրամասն, 3-6 ամսյա հանրային հաշվետվություն՝ թե՛ ֆինանսական և թե՛ բովանդակային:

Աղքատության հաղթահարման ռազմավարությունն ու ծրագիրը առնչվում են մեզ բոլորիս, քանզի միջազգային վարկերը և պարտքերը, որ Հայաստանը ստանում և կուտակում է այդ ծրագրի իրագործման համար, մեզ և մեր զավակներին առավել տկարացնելու և աղքատացնելու է, եթե մենք ընդունենք ներկայիս հաստատված գերակայությունները և գործընթացները: Անհրաժեշտ է հետևողական ձևով վերահսկել ծրագրի պատշաճ իրականացումը, վերամշակել ներկա գերակայությունները՝ ի խնդիր Հայաստանի տարածքում մեր բոլորի խաղաղ, բարգավաճ ու ներդաշնակ, ստեղծագործ ապրելուն՝ ԲՈԼՈՐԻՍ Սահմանադրական իրավունքի կենսագործմանը:

Այսօր տեսնում ենք, թե արտաքին կառույցներ և պետություններ նիշեր են տալիս, թե որ երկիրը ավելի ժողովրդավար է, զարգացած է կամ աղքատ, բայց այդ անհեթեթություն է. նիշը ինչի՞ վրայից է տրվում. ո՞վ է իրենց դատավոր նշանակել ուրիշ ազգերին և պետություններին դատելու և նիշ տալու համար և, ըստ դրան, պատժելու կամ գնահատելու, առավել վարկեր և պարտքեր տալով և փորձելով քանդել այդ պետությունները ՆԵՐՍԻՑ, նյութով և պաշտոններով: Այստեղ սկզբունքային հարց կա: Երբ մի պետություն կամ մի կառույց ուզում է մի ուրիշ պետության հետ համագործակցել, պիտի նստել հավասարը հավասարի բանակցության և աշխատակցության, թե չէ համագործակցություն չի լինի, այլև կլինի միակողմանի տիրապետում :

Տնտեսական աճը չպիտի նպաստակ լինի: Համաթարափակ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ մշակութային, սոցիալական, տնտեսական, քաղաքական զարգացումն է, որ պիտի դառնա պետական նպաստակ, որպեսզի սոցիալական բևեռացումը հաղթահարվի: Ասում ենք, թե 14% տնտեսական աճ ենք ունեցել, բայց ինչպե՞ս է եղել հաշվարկը և վերաբաշխումը, սոցիալական բևեռացումը հիմնախնդիր է և չի հաղթահարվել:

Այսօր աղքատության հաղթահարելուն օգնելու է ՄԻԱՅՆ քաղաքական արդար և համերաշխ պետական ծրագրի որդեգրումը և կամքը՝ դա որդեգրելու և իրականացնելու:

Պետք է վերջ տալ Համաշխարային Բանկի և նմանօրինակ կառույցների վարկերի, պարտքերի, դրամաշնորհների ստրուկը և գերին դառնալու քաղաքականությանը, զուտ ՁԵՎԱԿԱՆ / ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ այսպես կոչված "մասնակցային/գործընկերային մեխանիզմներով" ինքնախաբեությամբ կամ ժողովրդին խաբելով զբաղվելուն:

Արտաքին պարտք և արմատացող սոցիալական բևեռացում ունեցող պետությունը եվ *կոռումպացվող* փորձագետների շարան եւ ամլացող էլիտա սնող պետությունները չեն կարող ԶԱՐԳԱՆԱԼ:

Մեր համար կրթությունն է գերակայում, և հավատացած ենք, թե ամեն պետության հիմնական դերը գիտակից և զարգացած մարդ, անհատ, քաղաքացի դաստիարակելն է: **Այսօր մեր առաջնահերթ մարտահրավերներն են կրթությունը, սոցիալական արդարությունը և ազատ պետության ամբողջականությունը, որոնք ազգային, պետական անվտանգության հիմնախնդիրներ են և որևէ պետական քաղաքականություն և ծրագիր դրանք պետք է որդեգրի իբրև գերակայություն:**

Մենք յուրաքանչյուրս որպես ազգի մասնիկը, որպես ժողովուրդ, հասարակություն, կազմակերպություններ, կուսակցություններ, իշխանություններ փոխարեն կամազուրկ ուրիշներին նայենք, ուրիշ մոդելներ արտագրենք, գիտենանք, թե՝ մեր պատմության և մշակույթի մեջ կան հստակ կողմնորոշիչներ համահունչ համամարդկայինին, վերջինն էլ ինքներս ենք կերտել, և շարունակենք այդ ուղին: Այսօր սփյուռքը և Հայաստանը պիտի շատ զգաստ և հստակ տանեն այդ ուղին, որովհետև տարածաշրջանում մեծ փոփոխություններ են եղել և սպասվում և ծրագրավորվում են. շատ կարևոր է, սթափ լինել, ողնաշարը ուղիղ, ՉԹՈՂՆԵԼ ԲԵՐԴԸ ներսից գրավել և մեր նորաստեղծ պետությունը կոռումպացնել և սնանկացնել :

Թե՛ պայքարենք, թե՛ սերունդ պատրաստենք:

«Մարդու Իրավունքների և Ժողովրդավարության Ինստիտուտ» ՄԻԺԻ

Երևան, 3 մարտի 2005

Էլմար Հուսեյնովի սպանությունը որակվել է «մամուլի դեմ ահաբեկչություն»

Ադրբեջանում ընդդիմադիր լրագրողներին ստրացնում եւ ապանում են

Հոկտեմբերի երեկոյան Բաքվի իր բնակարանի շեմքում անհայտ անձանց արձակած հրազենի կրակոցներից սպանվել է ընդդիմադիր «Մոնիտոր» լրագրի հիմնադիր եւ գլխավոր խմբագիր, 38-ամյա Էլմար Հուսեյնովը:

«Չնայած ծանրագույն վերքերին, Հուսեյնովը կարողացել է հասնել իր բնակարան, երկու անգամ թակել դուռը, եւ երբ դուռը բացել են, նա ընկել է շեմքին: Նրա բերանից եւ քթից արյուն էր հոսում: Արյունով լցված մուտքը սարսափելի տպավորություն էր թողնում: Բաքվի ոստիկանության ղեկավարը լրագրողների ներկայությամբ հայտարարեց. «Սա սադրանք է»: Նա, ճիշտ է, չպարզաբանեց, թե ով կարող էր իրագործել նման սադրանքը: Կեսգիշերին մոտ սպանվածի դիակի հետեւից եկավ շտապօգնության մեքենան», այսպես է նկարագրում Բաքվի «Էխո» թերթը Հուսեյնովի սպանությունը:

Սպանությունից հետո Հուսեյնովի հայրը լրագրողներին ասել է, որ լսել է թեկնոտում հիշեցնող աղմուկ եւ շտապել բացելու դուռը: «Այդ պահին տուն ընկավ մահացու վիրավոր Էլմարը: Նա այդպես էլ մահացած ընկավ իր բնակարանի նախամուտքում», գրում է «Զերկալո» թերթը:

Ադրբեջանում հայտնի իրավապաշտպան Արզու Աբդուլաեւան Հուսեյնովի սպանությունը որակել է «ահաբեկչություն ընդդեմ մամուլի»: Նյու Յորքում գործող լրագրողների պաշտպանության հանձնաժողով կազմակերպության ներկայացուցիչներից Ալեխ Լոտիսը, ըստ «Ազատություն» ռադիոկայանի, ասել է. «Ադրբեջանում մամուլի ազատությունը վերջին 2 տարիներին, Իլհամ Ալիեւի իշխանության գալուց հետո շարունակում է անկում ապրել»:

Երեկ տեղի է ունեցել Ադրբեջանի նախագահին կից անվտանգության խորհրդի նիստ, որի ընթացքում, ըստ «Ռեգնումի», քննարկվել է Էլմար Հուսեյնովի սպանության դեպքը: Նախագահ Ալիեւը լուրջ մտահոգություն է հայտնել եւ իրավապահ մարմիններից պահանջել է շուտափույթ գտնել եւ ձերբակալել մարդասպաններին: Ալիեւը, վկայակոչելով Ադրբեջանում տիրող «հասարակական-քաղաքական կայունությունը», լրագրողի սպանությունը որակել է «լուրջ սադրանք պետության եւ իշխանությունների դեմ»:

«Այս հանցագործությունը կատարողները ձգտել են հարված հասցնել միջազգային ասպարեզում Ադրբեջանի ձեւավորված հեղինակությանը՝ փորձելով հանրապետությունը ներկայացնել որպես անկայուն եւ հակաժողովրդական, որտեղ տեղի են ունենում ահաբեկչական գործողություններ, խոսքի ազատությունը խեղդամահ է արված», ասել է Ալիեւը:

Հուսեյնովի սպանությունից ընդամենը մի քանի ժամ առաջ «Լրագրողներ առանց սահմանների» միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը մտահոգություն էր հայտնել Ադրբեջանում ընդդիմադիր լրագրողների հանդեպ կիրառվող բռնությունների առնչությամբ: Կազմակերպությունը Իլհամ Ալիեւին եւ ՆԳ նախարար Ռամիլ Ուսուբովին հորդորել էր «ձեռնարկել հնարավոր բոլոր քայլերը լրագրողների դեմ բռնություն իրականացնողներին բռնելու եւ պատժելու համար»:

Փետրվարի 25-ին ընդդիմադիր «Ազադլըղ» օրաթերթի խմբագիրը եւ տնօրենը սիստոդաբար բերվել էին Բաքվի սրճարաններից մեկը, որտեղ նրանց նկարահանել էին մարմնավաճառների հետ, որից հետո նրանց դաժանաբար ծեծել էին ու բերման ենթարկել ներքին գործերի բաժանմունք՝ սիստելով սոորագրել հնարավոր բոլոր քայլերը լրագրողների դեմ բռնություն իրականացնողներին բռնելու եւ պատժելու համար»:

Փետրվարի 25-ին ընդդիմադիր «Ազադլըղ» օրաթերթի խմբագիրը եւ տնօրենը սիստոդաբար բերվել էին Բաքվի սրճարաններից մեկը, որտեղ նրանց նկարահանել էին մարմնավաճառների հետ, որից հետո նրանց դաժանաբար ծեծել էին ու բերման ենթարկել ներքին գործերի բաժանմունք՝ սիստելով սոորագրել «հասարակական վայրում անվայել վարքի մասին» մեղայական ցուցմունք: Հաջորդ օրը Իլհամ Ալիեւի հսկողության տակ գտնվող «Լիդեր» հեռուստաընկերությունը եթեր է հեռարձակել «Ազադլըղի» լրագրողների մերկ լուսանկարները՝ մեկնաբանելով. «Ահա այսպես են ժամանակ անցկացնում անբարոյական ընդդիմադիր լրագրողները»:

Փետրվարի 2-ին Բաքվում զինվորականների կողմից բռնության էր ենթարկվել «Մոնիտոր» թերթի թղթակից Ամրեր Հասանովը: Ընդհանրապես «Մոնիտորը» համարվում է Ադրբեջանում ամենաընդդիմադիր պարբերականը եւ, ի տարբերություն ընդդիմադիր այլ թերթերի, քննադատում է ոչ թե իշխանություններին ընդհանուր գծերով, այլ կոնկրետ պաշտոնյաներին: «Մոնիտորը» փակվել է 2 անգամ: Խմբագիրը՝ արդեն սպանված Հուսեյնովը, 2001-2002 թթ. 6 ամսով բանտարկվել է: «Մոնիտորի» գրեթե բոլոր լրագրողները ենթարկվել են բռնությունների, ֆինանսական տույժերի՝ իրենց քննադատական հոդվածների համար:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Բալիի ահաբեկչության կազմակերպիչը դատապարտվեց 2,5 տարվա բանտարկության

Ինդոնեզիայի դատարանն արմատական իսլամի քարոզիչ Աբու Բաքր Բաշիրին 2,5 տարվա բանտարկության է դատապարտել, նրան Բալի կղզու 2002 թ. ահաբեկչության կազմակերպմանը մեղսակից ճանաչելով: Սակայն փաստերի անբավարարության պատճառով հանվել են ահաբեկչության անմիջական ղեկավարման եւ Ջակարտայի «Մարիոթ» հյուրանոցի 2003 թ. պայթյունի իրականացման մեղադրանքները: Հիշեցնենք, որ գբոսաշրջության կենտրոն Բալի կղզում 2002 թ. պայթյունից զոհվել էր 202 մարդ:

Աբու Բաքր Բաշիրի նկատմամբ երեկ կայացված դատավճիռը ենթադրվածից մեղմ է. դիտորդները կարծում էին, թե արմատականության քարոզիչը կդատապարտվի 8 տարվա բանտարկության: Ինքը՝ Բաշիրը դատավճիռն անարդարացի է համարել: Նրա բողոքի խոսքերին դատարանի դահլիճում իր կողմնակիցներն արձագանքել են հավանության բացականչություններով:

Բաշիրը «Ջամաաթ իսլամի» արմատական խմբավորման առաջնորդն է: Ենթադրվում է, որ խմբավորումը կապված է «Ալ Ղաիդա» միջազգային ահաբեկչական ցանցի հետ: Սակայն Բաշիրը մշտապես ժխտում է իր խմբավորման գոյությունը: Նա մերժում է իրեն ներկայացված մեղադրանքները, ասելով, թե ինքն աշխարհում, մասնավորապես Ինդոնեզիայում մահմեդականների դեմ ամերիկացիների նյութած դավադրության զոհերից է:

Դատարանում Բաշիրը հայտարարեց, որ ինքը լիովին պաշտպանում է ջիհադը, բայց դատապարտում է Ինդոնեզիայում ռումբեր պայթեցնողներին, քանի որ երկիրը պատերազմի մեջ չէ: Իր վերջին խոսքում նա դատավորներին ամբաստանեց Ամերիկայի առջեւ խոնարհվելու եւ Վաշինգտոնի ցուցումով գործելու մեջ:

Քադաֆին առաջարկում է լուծարել ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը

Լիբիայի ղեկավար Մուամմար Քադաֆին առաջարկել է լուծարել ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը եւ դրա պարտականությունները հանձնել Ընդհանուր ժողովին: Լիբիայի առաջնորդի կարծիքով, միայն այդ դեպքում ՄԱԿ-ը կկարողանա դառնալ իրոք ժողովրդավարական կազմակերպություն: Քադաֆիի առաջարկությունը դիտումի տեսքով հրապարակվել է բրիտանական «Գարդիան» թերթում:

Քադաֆիի բնորոշմամբ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը «դահճի գործիք է՝ բռնատիրության նողկալի ուժային կառույց, որի որոշումները ենթակա չեն գանգատարկման, եթե անգամ հակաօրինական եւ կանխակալ լինեն»:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 5 մշտական անդամներն ունեն վետոյի իրավունք, իսկ մյուս 10 անդամներն ընտրվում են երկու տարով եւ ունեն լոկ ձայնի իրավունք: Քադաֆիի կարծիքով, նման կառույցը չի կարող ներկայացնել ողջ աշխարհը: «Այդ խնդիրն անհամեմատ լավ կլուծեր ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովն իր անդամ 191 երկրների ներկայացուցիչներով, բայց հիմա այն չունի ոչ իշխանություն, ոչ պատասխանատվություն, ոչ էլ հարգանք», հայտարարել է Լիբիայի ղեկավարը:

Նրա խոսքերով, ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովն իր ներկա վիճակում հիշեցնում է Հայդ պարկի հռետորների հավաքատեղի, իսկ անդամ երկրներն իզուր փողեր են վատնում՝ իրենց դեսպաններին ուղարկելով մասնակցելու «այդ ծիծաղաշարժ ներկայացմանը»:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

Կամավոր արժանապատվությա՞մբ, թե՞...

Դեսպան Ջոն Էվանսի մեկնաբանությունների առթիվ

Կալիֆոռնիայի Բերլի համալսարանում ամերիկահայերի հետ հանդիպմանը ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպան Ջոն Էվանսի կատարած արտահայտությունների առթիվ Երեւանում Մ. Նահանգների դեսպանությունը փետրվարի 28-ին տարածեց դեսպանի մեկնաբանությունը: Անդրադառնալով այդ պարզաբանումներին, «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ Հարութ Սասունյանը գրում է. «Հակառակ այն փաստին, որ վերջերս վատացել են Թուրքիայի եւ Մ. Նահանգների հարաբերությունները, անհամաձայնությունը երկու երկրների միջեւ այն աստիճանի չի հասել, որ սիրի Բուշի կառավարությանը վերանայել իր դիրքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ Թուրքիայի որդեգրած ժխտողական ամոթալի քաղաքականության հանդեպ: Վաշինգտոնում ծվարած նորաթուխ պահպանողական թուրքամոլների փորձ, բայց ազդեցիկ խմբավորման գաղափարական նախապատարմունքներն այնքան ուժեղ ազդեցություն ունեն Մ. Նահանգների արտաքին քաղաքականության վրա, որ երբ թուրք եւ ադրբեջանցի պաշտոնական այրերը բողոքեցին դեսպան Էվանսի արտահայտությունների առթիվ, նրանք «ըմբռնող» լսարան գտան ամերիկացի բարձրաստիճան այրերի շրջանում:

Այդտեղերձ, հավատացած եմ, որ այս բոլորն իր դրական ազդեցությունն ունեցավ Հայ դատի վրա: Թուրքերը, ադրբեջանցիները ու նրանց խնամակալները Ամերիկայում սիրիված եղան իրենց արժեքավոր քաղաքական կապիտալից բավական մեծ ներդրում կատարելնման «պարզաբանում» հրատարակելու համար: Նրանք նույն «ջրհորից» չեն կարող մշտապես օգտվել: Ժամանակը կգա, եւ «աղբյուրը կարող է ցամաքել»: Մինչ Թուրքիայի վարկանիշն իջնում է, Վաշինգտոնում հայերը սկսել են ցեղասպանության 90-ամյակի միջազգային արարողությունները:

Շնորհիվ թուրքերի եւ ադրբեջանցիների արձագանքների ու հակադարձությունների, Հայոց ցեղասպանությունը մեկ անգամ եւս դարձել է քննարկման կարեւոր թեմա աշխարհի տարբեր մայրաքաղաքներում, այդ թվում նաեւ Անկարայում եւ Վաշինգտոնում:

Ժամանակը կգա եւ թուրքերն ու Մ. Նահանգների պաշտոնական այրերը կհրաժարվեն իրենց անհասկանալի եւ անընդունելի ժխտողական քաղաքականությունից: Հարցն այն է, թե նրանք այդ քայլին կդիմեն կամավոր արժանապատվությա՞մբ, թե՞ սիրիված կլինեն քարշ տալ դեպի անժխտելի ճշմարտությունը՝ կորցնելով ամեն հարգանք ու պատիվ այդ ընթացքում»:

Ցեղասպանության հարցի կարգավորման առաջարկ Էրդողանին

Մարտի 1-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովի շենքում ժողովրդահանրապետական կուսակցության գլխավոր նախագահ Դենիզ Բայքալը կուսակիցների հետ հանդիպմանը ներկաների ուշադրությունը հրավիրել է օտարերկրյա խորհրդարաններում տարիներ շարունակ Հայոց ցեղասպանության ճանաչման ծավալվող աշխատանքների վրա եւ ընդգծել այդ հարցի լուծման անհրաժեշտությունը:

Բայքալը նշել է, որ հարցի առնչությամբ հանդիպելու է վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին, ապա եւ ավելացրել. «Ով այս հարցում ինչ-որ գիտի, թող բերի: Չենք կարող հանդուրժել, որ աշխարհը դա քարոզչական հնարքներով մեզ վրա բարդի: Եթե հանցանք ենք գործել, ապա կկատարենք պետք եղածը: Սակայն չենք կարող այլ փակել մեղադրանքների նկատմամբ: Պատմությունը ցույց է տալու, որ Թուրքիան որեւէ բեռի տակ չէ: Պատմությունն անտեսելու միջոցով մեզ մատուցվող հանցագործի պիտակը պատռելու համար վարչապետին համատեղ աշխատելու առաջարկ եմ անելու»:

Բայքալի առաջարկի մասին մարտի 2-ի համարում տեղեկացնում է «Միլլիեթը», միաժամանակ նշում, որ Ժողովրդա-հանրապետական կուսակցության նախագահի առաջարկը նախատեսում է Հայոց ցեղասպանության հարցն ուսումնասիրելու նպատակով հայ եւ թուրք պատմաբաններից կազմված համատեղ հանձնախմբի ստեղծումը Յունեսկոյի հովանավորությամբ: Հ. Ղ.

«Ալ Ղաիդան» քիմիական եւ մանրէական զենք է մշակել Պանկիսի կիրճում

«Ալ Ղաիդա» միջազգային ահաբեկչական ցանցի գրոհայինները Վրաստանում՝ Պանկիսի կիրճում զբաղվել են քիմիական եւ մանրէական զենքի մշակումներով: Նման հայտարարությամբ Լիոնում հանդես է եկել Ֆրանսիայի ներքին գործերի նախարար Դոմինիկ դը Վիլպենը Ինտերպոլի կազմակերպած եւ կենսահաբեկչության հարցերին նվիրված համաշխարհային խորհրդաժողովում:

«Մեր հայթայթած փաստաթղթերը հաստատում են, որ «Ալ Ղաիդան» փորձել է ձեռք բերել կենսաբանական զենք եւ մշակել դրա կիրառման մեթոդներ: Աֆղանստանում թալիբների վարչակարգի տապալումից հետո այդ աշխատանքների մի մասը շարունակվեց Պանկիսի կիրճում՝ Չեչնիայի սահմանի մոտ», հայտարարել է ներքին գործերի նախարարը:

Երկու տարի առաջ Վրաստանի պետանվտանգության նախարարությունը եւս նման հայտարարություն էր արել: Նախարարության տվյալներով, Պանկիսում «Ալ Ղաիդայի» գրոհայիններն ուսումնասիրել են պայթուցիկ եւ թունավոր նյութերի, այդ թվում խիստ թունավոր ռիցինիումի պատրաստման եղանակները:

Այս տարվա հունվարի կեսերին Վրաստանում Ռուսաստանի դեսպանությունը կոչ արեց խորացնել երկու երկրների հատուկ ծառայությունների եւ սահմանապահ զորաստեղծությունների փոխգործողությունը: Պաշտոնական Թբիլիսին ժխտում է Պանկիսում չեչեն գրոհայինների եւ այլազգի ծայրահեղականների ներկայությունը, նշում է «Իզվեստիա» թերթը:

Փետրվարին ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովը հայտարարեց, որ Մոսկվան իրեն վերապահում է աշխարհի որեւէ կետում գրոհայիններին կանխիկ հարված հասցնելու իրավունք:

Մարտի 2-ին Վրաստանի արտգործնախարար Սալոմե Զուրաբիշվիլին Եվրոմիությանը խնդրեց քննության առնել ռուս-վրացական սահմանը ԵՄ ներկայացուցիչների խումբ գործուղելու հնարավորությունը՝ Պանկիսին Ռուսաստանի կանխիկ հարվածներ թույլ չտալու նպատակով:

Պ. Ք.

Որ Սարդարապատի զանգերը զվարթ ղողանջեն

Կամ ինչո՞ւ է վրդովված ազգագրության թանգարանի կոլեկտիվը

Երկար մտորեցի. իմաստ ունի՞ խառնվել Սարդարապատի ազգագրության թանգարանի շուրջ ծավալված խոսակցություններին: Բայց, քանի որ հարցը մեր ժողովրդի գոյատևման գլխավոր նախապայմաններին՝ բանակին ու մշակույթին է վերաբերում, չէի կարող լռել:

Տարիներ շարունակ աշխատելով հանրապետության թանգարանային համակարգում, քաջատեղյակ եմ այս թանգարանի թե՛ ստեղծման եւ թե՛ վերելքների ու վայրէջքների պատմություններին, թանգարանի հին ու նոր աշխատակիցներն ու ղեկավարներն իմ ընկերներն են, կարծում եմ՝ խոսքս հավատի ու անկողմնակալ կինչի:

Ինչո՞ւ էին վրդովված թանգարանի աշխատողները մեկ տարի առաջ: Հարցի պատասխանը գտնելու համար կատարենք անհրաժեշտ պատմական էքսկուրս. տաղանդավոր ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը, անսալով իր գաղափարակից ընկերների հորդորներին, նախագծեց Սարդարապատի հուշահամալիրը՝ չմոռանալով նաեւ այդ հերոսամարտի ու հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի մյուս վառ էջերն արտացոլող թանգարանի մասին՝ նախագծում թանգարանի բաժնում գրելով՝ «Ազգային ազատագրական պայքարի պատմության թանգարան»: Անհի բերդապարիսպներին հար եւ նման կառուցվեց թանգարանի շենքը՝ մեր հանրապետությունում թանգարանային ամենամեծ ու ամենահմտահյուս շինությունը: Թանգարանի բնույթն ու կոչումն են հուշում նաեւ շենքի՝ հայ ժողովրդի ազատագրական պայքարն ու զինուժը խորհրդանշող զարդաքանդակները:

1968 թ.-ին՝ Սարդարապատի հերոսամարտի 50-ամյակի տարում հուշահամալիրը հանդիսավորապես բացվեց: Բայց թանգարանի հարցը երկար ժամանակ բաց էր մնում: Բանն այն է, որ Մոսկվան արդեն մեկ «զիջում» արել էր՝ թույլատրելով հուշահամալիրի կառուցումը: Երկրորդն արդեն շռայլություն կլիներ մի կայսրության համար, որի առաջին դեմքերը Երեւանի վրայով Անկարա էին թռչում, ծաղկեպսակներ դնում Աթաթուրքի գերեզմանին ու հայտարարություններ անում՝ եղբայրական Թուրքիայից տարածքային պահանջներ չունենալու մասին: Այսօրվա սերնդի համար, անշուշտ, զավեշտական կինչի, եթե ասենք, որ ինքնակման ու բանավեճերի առարկա դարձավ նույնիսկ այն, թե դեպի որ կողմը պետք է ուղղված լինեն հուշահամալիրի ծառուղում տեղադրված արձիվների հայացքները: Արդյունքում՝ կանգնեցվեցին ծառուղու աջակողմյան 5 արձիվները, իսկ նրանց կրկնակները, որ պիտի դեպի սահման նայեին, մինչեւ այսօր սպասում են իրենց աստղային ժամին... Ահա այս օրերին հենց դեռ խանձարուրի մեջ գտնվող թանգարանի տնօրեն է նշանակվում աշխատանքի փորձով, գիտելիքների հարուստ պաշարով իմաստնացած, համարձակ ու եռանդով լեցուն Լավրենտի Բարսեղյանը: Երբ նրա բազում այցերը Մոսկվա՝ համոզելու կազմակերպել ազգային-ազատագրական պայքարի պատմության թանգարան՝ ի դերեւ են գալիս, որոշվում է որպես այլընտրանքային եւ ժամանակավոր տարբերակ ընդունել թանգարանին «Ազգագրական» անուն տալը: Այո՛, ժամանակավոր, քանզի մեծերը միշտ էլ առաջ են նայում՝ գուշակելով ապագան: Ու թանգարանը կայացավ: Կայացավ Լ. Բարսեղյանի, նրա գործընկերների, մեկ տարի առաջվա ու այսօրվա վրդովված թանգարանային աշխատողների մեծ մասի տքնաջան աշխատանքով:

Համալրվեցին թանգարանի ֆոնդերը, կազմակերպվեցին մի շարք հիմնական, շրջիկ ու արտագնա ցուցահանդեսներ, գիտահետազոտական աշխատանքների արդյունքում հրատարակվեցին տասնյակ մենագրություններ, պատմանվեցին գիտական թեզեր: Թանգարանը վերելք էր ապրում՝ տարիներ շարունակ իր ձեռքում պահելով ԽՄԿԿ Կենտկոմի եւ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի փոխանցիկ դրոշը:

1985 թվականին այս բոլոր ձեռքբերումների դիրիժորն ու ոգեշնչողը կառավարության որոշմամբ նշանակվեց հրն ծարակ դարձած մարզահամերգային համալիրի տնօրեն ու թողեց թանգարանը... Սկսվեցին թանգարանի վայրէջքի ժամանակները:

1998 թվականին նշվելու էր Սարդարապատի փառապանծ հաղթանակի 80-ամյակը: Այստեղ այցելած երջանկահիշատակ Վազգեն Սարգսյանը չէր կարող անտարբեր անցնել թանգարանի քայքայվող շենքի, հուշահամալիրի անմխիթար վիճակի կողքով եւ, որպես հարցի լուծում, առաջարկեց համալիրը ներգրավել պատմությանը նախարարության համակարգում, ու գնալով ակնկալներին՝ թանգարանը ծառայեցնել նաեւ իր սկզբնական կոչմանը՝ ազգագրությանը զուգահեռ ներկայացնելով նաեւ մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի վառ էջերը: Նույն տարվա հունիսին կառավարությունը որոշում ընդունեց Սարդարապատի հուշահամալիրն ու ազգագրության պետական թանգարանը մշակույթի համակարգից ՊՆ համակարգ տեղափոխելու մասին: Հիշենք՝ դրանք այն տարիներն էին, երբ մշակույթի աշխատողները ամիսներով աշխատավարձ չէին ստանում, մոռացել էին ֆինանսավորման այլ աղբյուրների, գնման գումարների մասին: Պատմության նախարարության համակարգում վիճակն անհամեմատ բարվոք էր:

Շուտով բարեկարգվեց տարածքը, վերականգնվեց ոռոգման համակարգը, տնկվեցին հազարավոր ծառ ու ծաղկաթփեր: Սակայն եթե հուշահամալիրը հիմնովին նորոգվեց, թանգարանի շենքը դադարեց ողողվել անձրեւաջրերից ու ձյան հալոցքներից, ապա թանգարանի գիտական գործունեությունը հետին պլան մղվեց:

Ժամանակին պատմության նախարարությունը եւս թերացավ եւ Սպարապետի բարի ցանկություններ մինչեւ վերջ չիրականացվեցին: Բանը նորոգումից ու թանգարանի անունը փոխելուց այն կողմ չանցավ, չարդարացան աշխատակիցների ակնկալիքները՝ իրենց սոցիալական վիճակի բարելավման, գնման գումարներ հատկացնելու, գիտահետազոտական աշխատանքների արդյունքները հրատարակելու, ցուցադրությունը թարմացնելու, Սարդարապատի ճակատամարտի համայնապատկերն ավարտին հասցնելու եւ մյուս հարցերում: Չգիտես կառուցվածքային ինչ սկզբունքի դավանելով, զորամասի կարգավիճակ ունեցող կազմակերպությանը չտրվեց սպայական որեւէ հաստիք, նույնը մնաց թանգարանի կառուցվածքն ու կանոնադրությունը, չմշակվեցին նոր ցուցադրության կազմակերպման գիտական հայեցակետերը, ձեռք չբերվեցին համապատասխան նյութեր, չպատվիրվեցին նոր ցուցադրության կահույքն ու անհրաժեշտ քարտեզները, սխեմաները եւ այլն: Այս երանելի՞ հանգստավետությունը շարունակվեց մինչեւ այն օրը, երբ նախարարությունում վերեւին հիշեցին, որ թանգարանի գործունեությունը նաեւ ռազմահայրենասիրական դաստիարակությանը պետք է ծառայեցվի: Չէ՞ որ, ինչպես ասում են՝ ով վճարում է, նա էլ պատվիրում է երաժշտությունը: Ու քանի որ թանգարանի հին ու նոր աշխատակիցներն արդեն մոռացել էին, որ այս թանգարանը ժամանակավորապես է ազգագրական բնույթ ստացել, պատմության նախարարության քայլերը՝ մշակութային այս օջախում նաեւ ազգային-ազատագրական պայքարի պատմությունն արտացոլող ցուցադրություն կազմակերպել, սվիններով ընդունվեց:

Հասկանալի է, մարդիկ տարիներ շարունակ դժվարին պայմաններում նյութեր են հավաքել, ցուցադրություն կազմակերպել, մասնագիտացել են ազգագրության բնագավառում, գիտական թեզեր պատրաստել, եւ հանկարծ՝ այդ ամենը իզուր է դառնում: Կրքերն առավել շիկացան, երբ տարածվեց թանգարանի ազգագրական մասը լիովին փոշիացնելու լուրը. մի հարց, որ, ինչպես պատմությանը նախարարության ղեկավար այրերն են հավաստում, երբեք չի քննարկվել:

Այն, որ մեր հանրապետության լավագույն հավաքածուն ու ցուցադրությունն ունեցող ազգագրության թանգարանը պետք է պահպանվի, անվիճելի է: Ընդհակառակը, ժամանակն է, որ մենք վերջապես տեր կանգնենք մշակութային մեր արժեքներին: Մեր թերացումները լավագույնս հօգուտ իրենց են օգտագործում օտարները: Արդեն քանի տարի չարչրկվում է Հայաստանում գորգի թանգարան հիմնելու հարցը: Մենք խոսում ենք, քննարկում ու բանավիճում, իսկ թուրքերն ու կիրգիզները, թուրքմենները ու ադրբեջանցիները հայկական գորգերն աշխարհին որպես իրենց խաբնարած նախնիների արվեստի գործեր են ներկայացնում... Հարցի լավագույն լուծումն, անշուշտ, ժամանակին Վ. Սարգսյանի առաջարկած տարբերակն էր. Սպայի տան ներկայիս շենքի բակում կառուցել բարձրահարկ շենք՝ 1-ին երկու հարկերում տեղավորելով նաեւ ազգային ազատագրական պայքարն ու զինուժը ներկայացնող թանգարանը: Սակայն ֆինանսական միջոցների բացակայությունը թույլ չտվեց ծրագիրն իրագործել, եւ այսօր պետք է գտնել հինը չքանդելու, ազգագրությունն ու ազատագրական պայքարը համերաշխորեն միասին ներկայացնելու տրամաբանված, գիտականորեն հիմնավորված ձեւեր մանավանդ, որ սթափ մտածելու դեպքում ազգագրական իրերից շատերը հենց տվյալ ժողովրդի մղած ազատագրական պայքարն ու դրա նվիրյալներին են վերաբերում կամ պատկերում: Չմոռանանք, որ երբեք մշակույթն ու գիտությունը վեր չեն եղել ժողովրդի գոյապահպանման խնդիրներից, այլ, ընդհակառակը, նպաստել են դրան, անհրաժեշտության դեպքում՝ լիովին տրվել ազգային ազատագրական պայքարին:

Մեկ այլ, միանգամայն ողջունելի տարբերակ ժամանակին առաջարկում էր հենց Լավրենտի Բարսեղյանը. «Հաղթանակ» զբոսայգում ստեղծել թանգարանային համալիր, եւ ազգային-ազատագրական պայքարի պատմությունը արտացոլող թանգարանը տեղավորել «Մայր Հայաստան» զինվորական թանգարանի հարեւանությամբ՝ այստեղ տեղափոխելով նաեւ ազգագրության թանգարանում պահվող զինուժը ներկայացնող ցուցանմուշները:

Սարդարապատի թանգարանում դժգոհությունների մի նոր ալիք բարձրացավ վերջերս, երբ շուրջ 20 տարվա ընդմիջումից հետո թանգարանի տնօրեն նշանակվեց նրա հիմնադիրը՝ Լավրենտի Բարսեղյանը: Թվում էր, թե պատմության նախարարության այս նոր, մեր կողմից ողջունելի նշանակումը պետք է ջերմությամբ ընդունվեր թանգարանում՝ մանավանդ հին աշխատողների կողմից: Չէ՞ որ նրանց մեծ մասը աշխատանքի էր ընդունվել հենց Լ. Բարսեղյանի օրոք, նրա հետ քաջել թանգարանի ստեղծման ծանր լուծը: Ավաղ, այդպես չեղավ: Այսօր լրատվամիջոցները ժամանակ առ ժամանակ անդրադառնում են թանգարանում ստեղծված անառողջ մթնոլորտին կամ դրա շահարկումներին:

Ինչ է պատահել: Բանն այն է, որ անկախության հռչակումից հետո թանգարանի գիտական անձնակազմի մեծ մասը սփռված էր իր հանապազօրյա հացը վաստակել 2-րդ տեղում աշխատելով: Որքան էլ տաղանդավոր, աշխատասեր, ճկուն մտածողության տեր լինի թանգարանագետ-գիտնականը, 15-20 հազար դրամով չի կարող ընտանիք պահել: Եվ ահա՝ բախվում են Լավրենտի Բարսեղյան պահանջկոտ, միշտ կարգ ու կանոնին հետամուտ ղեկավարի ու թանգարանի գիտանձնակազմի մի սվար զանգվածի շահերը: Ո՞վ է ճիշտ: Հարկավ, երկուսն էլ ճիշտ են: Եթե 70-80-ական թվականներին մարդիկ ամեն օր Երեւանից Սարդարապատ էին հասնում, աշխատում էին՝ սանձալով 100-120 ռուբլի, մի կերպ յոլա էին գնում՝ հայացքները վաղվա օրվան, ապա այսօր անիմաստ է ամեն օր թանգարան գնալ, քանզի այնտեղի խղճուկ աշխատավարձը ընտանիքի ամենահամեստ պահանջներն իսկ չի բավարարում: Ու բոլորովին էլ զարմանալի չէ, որ մարդիկ ոչ թե գաղափարի, մարդու հետեւից են գնում, այլ՝ փողի, գոյատևման միջոցի... Տվեք բավարար աշխատավարձ եւ ամեն ինչ իր տեղը կընկնի:

Իմ լավագույն բարեկամ, թանգարանային գործի նվիրյալ Լավրենտի Բարսեղյանը, ցավոք, մասնագետներին թանգարանում պահելու նպատակով ֆինանսական բարվոք վիճակ ստեղծել չկարողանալով կամ չփորձելով, այդտեղ հարցը կտրուկ է դրել՝ կամ միայն թանգարանում աշխատել, կամ ազատվել աշխատանքից: Ու ազատվեցին: Աշխատանքից ազատվելու դիմումներ գրեցին հանրապետությունում առանց այդ էլ մատների վրա հաշվվող մասնագետներ, որոնք երեկ, մյուս օրը նույն Լ. Բարսեղյանի աջ ձեռքն էին, լավագույնս օգնում էին նրան թանգարանը ստեղծելու դժվարին գործում: Փաստ է, որ թանգարանային գործի գիտակները, ինչպես գորգավաստի փնտրված մասնագետ Աշխունջ Պողոսյանն է վիրավորված գրում «փողոցներում թափված չեն»: Այո, մասնագետներին պահել-պահպանել է պետք եւ ոչ թե նրանցից ազատվել: Այն, որ թանգարանային լավ մասնագետը նաեւ պատմության համակարգում է անհրաժեշտ, անվիճելի է: Չէ՞ որ Հայկ ու Բելից, Ավարայրից սկսած մինչեւ արցախյան ազատամարտ, մեր բոլոր հաղթանակների հիմնական գրավականը զինվորի, ազատամարտիկի ոգին է եղել, նվիրվածությունն իր հող ու ջրին, հայրենիքին: Իսկ դա պետք է դաստիարակել մանկապարտեզից սկսած: Այսօր, երբ ընթերցանությունը դարձել է ոչ «մոդայիկ», առավել է կարեւորվում թանգարանների դերը, որտեղ այցելուն կարճ ժամանակում լիարժեք տեղեկատվություն է ստանում երկրի հերոսական պատմության կարեւորագույն դրվագների, դրանց նվիրյալների մասին, դաստիարակվում այդ ոգով: Մի բան, որ զինվորի համար ամենագերժամանակակից զենքից էլ կարեւոր է: Ուստի, ժամանակի հրամայականն է՝ էապես բարելավել թանգարանների, ամենից առաջ պատմության նախարարության համակարգի թանգարանների դաստիարակչական գործունեությունը, իսկ դրա առաջին նախապայմանը փորձառու կադրերին հավուր պատշաճի վարձատրելու, աշխատանքային նորմալ պայմաններ ստեղծելու մեջ է: Այդ դեպքում ոչ աշխատողները կդժգոհեն եւ ոչ էլ տնօրենը ստիպված կլինի դիմելու կտրուկ քայլերի:

Սարդարապատի զանգերը հավերժ ու զվարթ կղողանջեն, եթե մեր մշակույթին տեր կանգնելով՝ մեր պատմության ու մշակույթի լավագույն ավանդույթներով դաստիարակենք այսօրվա սերնդին, նրանց մեջ ամրապնդենք սերն ու նվիրվածությունը հայրենիքին: Իսկ դա ավելի լավ, քան թանգարանները, դաստիարակության ոչ մի օջախ չի կարող իրագործել:

Ականջալուր լինենք պատմության իմաստուն դասերին: Վաղը ուշ կլինի...

ԱՍԱՐԵՆԱ ԱԲԳԱՐՅԱՆ

ԱՍՄ

«Լարֆը» «Հիսուսի շարշարանքները» երաժշտական նոր ներկայացմամբ

Լոս Անջելեսի «Նոր օր» շաբաթաթերթը տեղեկացնում է, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության հովանավորությամբ «Լարֆ» երաժշտական ընկերակցությունը մարտի 5-ին Գլենդելի երիցական (պրեսբիտերական) եկեղեցում ներկայացնելու է Յու. Ս. Բախի «Քրիստոսի չարչարանքները»՝ ըստ Սբ. Հովհաննես Ավետարանչի:

Երգեցողության գերմաներեն կատարմանը կուղեկցի հայերեն եւ անգլերեն սուպերտիտրը՝ մասնակցությամբ Դանիել Փլասթերի (Ավետարանիչ), Էդմոնդ Ղարախանյանի (Հիսուս), Ալենուշ Եղնազարի (սոպրանո) Շողիկ Գուլֆյանի (մեցցո սոպրանո), Սուրեն Հազարյանի (տենոր), Արա Կուրույանի (բաս), դիրիժորությամբ Վաչե Պարսումյանի:

Մինչեւ համերգային ներկայացումը կտրվի կես ժամանոց մեկնաբանություն Կարեն Չութչյանի ընթերցմամբ:

Մ. Բ.

Պատանի կինոխնամակալներ

Ամերիկահայ Ջեյսոն եւ Էնդրյու Մադանջյան եղբայրները, որոնցից ավագը 12, իսկ կրտսերն ընդամենը 10 տարեկան է, ԱՄՆ-ում Համայնային թերթերի ընկերության ցանցի անդամ, Մասաչուսեթս նահանգի Կորդովա քաղաքի տեղական թերթերից մեկում՝ Woburn Advocate-ում ունեն սեփական սյունակը: Նրանց հոդվածները տպագրվում են ամիսը մեկ անգամ եւ յուրօրինակ գրախոսական է իրենց դիտած նոր ֆիլմերի:

Ջեյսոնը սովորում է Ուոբրնի Ջոյս միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանում, իսկ Էնդրյուն հաճախում է Ռիվզ տարրական դպրոցը: Գրել նրանք սկսել են սեպտեմբերից, եւ փաստորեն նրանց «ինքնադասական» գործունեությունն այնքան է հաջողվել, որ, ինչպես ասում է Woburn Advocate-ի խմբագիր Միրանդա Մորգան, թերթը կբարունակի տպագրել տղաների ինքնադասական հոդվածներն այնքան ժամանակ, որքան իրենք դա ցանկանան: Վերջին ֆիլմերից մեկը, որը եղբայրները դիտել են 2004 թ. դեկտեմբերին եւ նրանց անչափ դուր է եկել «Բեւեռային ծերունիներ» է, իրենց ասելով՝ կատարյալ ֆիլմ, որ կարելի է դիտել արձակուրդներին: Մյուս հոդվածը կվերաբերի «Գեր Ալբերտին» եւ «Պարզամիս Սնիթեքներին», որոնք թողարկվել են արձակուրդների ընթացքում:

«National Amusements»-ը՝ ամերիկյան մի ընկերություն, որը զբաղվում է հետաքրքրաշարժ ֆիլմերի եւ հաղորդումների թողարկմամբ, իմանալով տղաների մասին, սկսել է նրանց ազատ մուտք տրամադրել մի շարք ֆիլմերի դիտման համար:

Եղբայրները հաճախում են Ուոթերթաունի Սբ. Հակոբ հայկական եկեղեցին, բայց չեն խոսում հայերեն: Նրանց հայրը՝ չիպսերի շրջիկ առեւտրական, հայ է, իսկ մայրը՝ ամերիկուհի: Տղաները Հայաստանի մասին գիտեն ինտերնետից: Գիտեն, որ այստեղ «շատ եկեղեցիներ կան» եւ կուզեին այցելել:

ԼՈՒԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բրյուսովի անվ. լեզվաբանական համալսարանի 5-րդ կուրսի, թարգմանչական խմբի ուսանողուհի

«Շիրակը» հուշամրցաշարի հաղթող

Ադեն ավելի քան 30 տարի Արմավիրում անցկացվում է խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյանի ֆուտբոլի հուշամրցաշարը: Նոր մրցաշրջանին նախապատրաստվող հայաստանյան թիմերի համար հուշամրցաշարը խաղային փորձ ձեռք բերելու, ֆուտբոլիստների պատրաստականությունը ստուգելու հիանալի հնարավորություն է: Բացառություն չէր նաեւ այս տարվա մրցաշարը, որին մասնակցեցին 8 թիմեր: Նախնական փուլում թիմերը բաժանվել էին 2 խմբի: Առաջինում մրցակիցների նկատմամբ իր բացահայտ առավելությունը դրսեւորեց Երեւանի «Արարատը»՝ բոլոր 3 հանդիպումներն էլ («Էսթեղալ-Կոտայք»՝ 3-1, «Վաղարշապատ»՝ 5-0, «Լեռնային Արցախ»՝ 2-0) ավարտելով իր օգտին: Մյուս ենթախմբում ավելի համառ պայքար ընթացավ «Շիրակի», «Լեռնագործ» ակումբի «Արարատ» թիմի եւ «Փյունիկ-2»-ի միջեւ, որոնք վաստակել էին հավասար՝ 6-ական միավոր: Լրացուցիչ ցուցանիշներով եզրափակիչի ուղեգիր նվաճեց «Շիրակը»:

Երեկ Արմավիրի «Հոբելյանական» մարզադաշտում գլխավոր մրցանակը վիճարկեցին Երեւանի «Արարատն» ու Գյումրու «Շիրակը»: Եզրափակիչ խաղն անցավ բավական աշխույժ մրցակցությունում: Առաջին խաղակեսում ավելի ակտիվ էին շիրակցիները, որոնք մի քանի անգամ սպառնացին «Արարատի» դարպասին: Մասնավորապես 20-րդ րոպեին հաշիվը կարող էր բացել շիրակցի Վարդան Բիչախչյանը, սակայն իր վարպետությունը ցուցադրեց դարպասապահ Ռադաչան: Արարատցիներն էլ կարող էին հաջողության հասնել Արթուր Ավագյանի հեռահար հարվածից հետո, սակայն հաջող խաղաց դարպասապահ Հովհաննիսյանը:

Ընդմիջումից հետո արարատցիները զգալիորեն աշխուժացրին հարձակողական գործողությունները եւ 2 անգամ կարող էին հասնել հաջողության: Նախ՝ Արթուր Մինասյանը, մեն-մենակ հայտնվելով դարպասապահի դիմաց, չկարողացավ հաղթող դուրս գալ նրա հետ մենամարտում, ապա Կարեն Ավոյանի հարվածից հետո շիրակցիներին օգնության եկավ դարպասի ձողը: Իսկ ահա, շիրակցիներն ավելի հաջողակ գտնվեցին. 62-րդ րոպեին նրանց ձեռնարկած կոմբինացիան դիպուկ հարվածով եզրափակեց Անդրանիկ Բարիկյանը: 2 րոպե անց «Շիրակը» կարող էր կրկնապատկել հաշիվը, սակայն Երվանդ Հակոբյանի հարվածը դիպավ հորիզոնական ձողին: Մի դրվագում էլ վերահաս գոլից արարատցիներին փրկեց Ռադաչան՝ հետ մղելով Գառնիկ Սարգսյանի վտանգավոր հարվածը: Խաղավերջում արարատցիները կարող էին խույս տալ պարտությունից, սակայն Կարեն Խաչատրյանը նոպաստավոր դիրքից վրիպեց:

Այսպիսով, հաղթելով 1-0 հաշվով, «Շիրակը» դարձավ հուշամրցաշարի հաղթող: Գավաթը «Շիրակի» ավագ Գագիկ Մարգարյանին հանձնեց Հունան Ավետիսյանի որդին՝ Հենզելը: Մրցաշարի լավագույն խաղացողների համար Արմավիրի քաղաքապետ Ռուբեն Հլղաթյանի սահմանած մրցանակները հանձնեց մշակույթի բաժնի վարիչ Արսեն Զաքարյանը: Լավագույն դարպասապահ ճանաչվեց արարատցի Նենադ Ռադաչան, պաշտպան՝ շիրակցի Գագիկ Մարգարյանը, կիսապաշտպան՝ շիրակցի Վահան Մառանջյանը եւ հարձակվող՝ արարատցի Ռենատոն:

Խաղից հետո զուցեցինք թիմերի գլխավոր մարզիչների հետ:

Արկադի Անդրեասյան («Արարատ»)- Մեր երիտասարդ ֆուտբոլիստների համար այս մրցաշարը փորձ ձեռք բերելու հիանալի հնարավորություն էր: Ընդհանուր առմամբ 2 թիմերն էլ ակտիվ խաղ ցուցադրեցին, ունեցան դարպասներ գրավելու լավ հնարավորություններ: Ավելի հաջողակ գտնվեցին շիրակցիները, որոնց էլ շնորհավորում եմ հաղթանակի առթիվ:

Ժորա Բարսեղյան («Շիրակ»)- Խաղին մենք շատ լուրջ էինք նախապատրաստվել՝ գիտակցելով, որ մրցակիցն «Արարատն» է, մարզիչն էլ՝ Արկադի Անդրեասյանը, որը հանդիպման ընթացքում մարտավարական մի քանի անակնկալներ մատուցեց: Բայց մենք պատրաստ էինք դրան: Տղաները պայքարեցին մինչեւ վերջ: Կարծում եմ, արդյունքը համապատասխանում է ուժերի հարաբերակցությանը: Բավականին հաջող խաղ ստացվեց, մրցակցություն կար: Շատ ուրախ եմ հաղթանակի համար, գոհ եմ տղաների խաղից: Կաշխատենք նմանատիպ խաղ ցուցադրել նաեւ գավաթի եւ առաջնության հանդիպումներին՝ ձգտելով հասնել հաջողության: Ցավոք, ֆինանսական խնդիրների պատճառով չենք կարող մինչեւ գավաթի խաղարկության մեկնարկն ուսումնամարզական հավաք անցկացնել Արարատում: Ուստի ստիպված ենք կրկին մարզումներն անցկացնել Գյումրիում: Գյումրին ֆուտբոլային հին ավանդույթներ ունեցող քաղաք է, եւ որքան էլ ֆուտբոլիստները հեռանան թիմից, միեւնույն է, «Շիրակը» կպահպանի իր մարտունակությունը, գյումրեցուն բնորոշ թափը:

Խաղաղ տուր

Լինարեսի շախմատային մրցաշարի մասնակիցները հասան առաջին շրջանը: 7-րդ տուրի բոլոր պարտիաներն էլ ավարտվեցին ոչ-ոքի: Ընդհանրապես, այս տարի էլ մրցաշարն առաջ է ոչ-ոքիներով: Հետաքրքրական է, որ ՖԻԴԵ-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Ռուսաստան Կասպիմջանովը եւ Պետեր Լեկոն անցկացրած բոլոր 6 պարտիաներում էլ խաղաղ դաշն են կնքել մրցակիցների հետ: 7-րդ տուրում Լեկոն սեւերով խաղում էր իսպանացի Ֆրանսիսկո Վալյեխոյի հետ: Վերջինս մրցակցին հնարավորություն չտվեց ակտիվ խաղ կազմակերպել: Եվ արդեն 13-րդ քայլում մրցակիցները հաշտություն կնքեցին:



Տուրի կենտրոնական հանդիպումը Գարի Կասպարովի եւ Վեսելին Թոփալովի պարտիան էր: Այստեղ էլ մրցակիցները որոշեցին ռիսկի չդիմել եւ արդեն 21-րդ քայլին համաձայնվեցին ոչ-ոքի արդյունքի: Մայքլ Ադամսի եւ Վիշվանաթան Անանդի պարտիան ավելի երկար տեւեց: Անգլիացի գրոսմայստերը, որ Լինարեսում արդեն 2 պարտություն է կրել, փորձում էր հաղթանակի ուղիներ փնտրել: Սակայն նրան էլ չհաջողվեց հաղթանակ տոնել: 28-րդ քայլին գրանցվեց ոչ-ոքի:

Այսպիսով, առաջին շրջանի հաղթող ճանաչվեց Գարի Կասպարովը, որը վաստակել է 4 միավոր: 3,5-ական միավորով հաջորդ տեղերում են Անանդն ու Թոփալովը: Նրանցից կես միավոր պակաս են վաստակել Կասիմջանովն ու Լեկոն: Ադամսն ունի 2,5, Վալյեխոն՝ 1,5 միավոր:

Ռոմարիոյի բախտը չբերեց

Ռիո դե Ժանեյրոյի Կոպակաբանա լողափում մեկնարկել է լողափային ֆուտբոլի աշխարհի անդրանիկ առաջնության ընտրական մրցաշարը 8 հավաքականների մասնակցությամբ: Ինչպես տեղեկացրել էինք, Բրազիլիայի հավաքականում ընդգրկվել է 39-ամյա Ռոմարիոն: Վերջինիս բախտը չբերեց: ԱՄՆ-ի հավաքականի հետ մեկնարկային խաղի արդեն 7-րդ րոպեին Ռոմարիոն վնասվածք ստացավ եւ ֆուտբոլասերների ծափողջույնների ներքո թողեց ասպարեզը: Չնայած Ռոմարիոյի բացակայությանը, բրազիլացիները մեծ առավելությամբ հաղթեցին մրցակցին (11-2): Բժիշկների հավաստմամբ, Ռոմարիոն մինչեւ շաբաթվա վերջը չի կարող խաղադաշտ դուրս գալ: Հավաքականի մարզիչ Ժորժի Ֆեռեյրա Ալվեսը Ռոմարիոյին ազատել է պարապմունքներից: Բրազիլիայի հավաքականն ընտրական մրցաշարի հաղթողի գլխավոր հավակնորդն է: Այս մրցաշարում խաղարկվում է աշխարհի առաջնության եզրափակիչ փուլի 4 ուղեգիր: Առաջնությունը եւ կկայանա Ռիո դե Ժանեյրոյում, այս տարվա մայիսին:

Գլեյզերը նոր առաջարկ է ներկայացրել

Ամերիկացի միլիարդատեր Մալկոլմ Գլեյզերը չի հրաժարվել «Մանչեսթր յունայթեդը» գնելու իր մտադրությունից: Ակումբի բաժնետոմսերի 28,1 տոկոսի տերը նոր առաջարկ է ներկայացրել: Նա պատրաստ է 800 մլն ֆունտ ստեռլինգով գնել ակումբի բաժնետոմսերը՝ մեկ բաժնետոմսի համար առաջարկելով 300 պենս: Եթե գործարքը տեղի ունենա, ապա Գլեյզերը կդառնա «Մանչեսթր յունայթեդի» նոր սեփականատերը:

126-ամյա պատմություն ունեցող անգլիական տիտղոսակիր ակումբի երկրպագուները դեռեւս անցյալ տարի բողոքի մեծ ակցիա էին կազմակերպել ընդդեմ Գլեյզերի, որոնք չեն ցանկանում, որ ակումբի բոլոր բաժնետոմսերը պատկանեն միայն մեկ մարդու: Իրենց բացասական վերաբերմունքն են արտահայտել նաեւ թիմի գլխավոր մարզիչ Ալեխ Ֆերգյուսոնը, Էրիկ Կանտոնան, Օլե Գունար Սոլշերը եւ Ռայան Գիգզը: Վերջինս կոչ է արել բաժնետերերին Գլեյզերին չվաճառել իրենց բաժնետոմսերը, որպեսզի ակումբը չդառնա որեւէ մեկի սեփականությունը: Թիմի պատմական Ռիո Ֆերդինանդն էլ նշել է, որ հայտնի չէ, թե ինչ կտա թիմին Գլեյզերի առաջարկը:

Ռոբենը հոլանդացիներին չի կարող օգնել

Մարտի 30-ին Հայաստանի հավաքականի հետ հանդիպմանը չի մասնակցի Հոլանդիայի ընտրանու եւ անգլիական «Չելսիի» կիսապաշտպան Արիեն Ռոբենը: «Բլեքբյոռնի» հետ առաջնության խաղում Ռոբենը դարձել էր միակ գոլի հեղինակ, սակայն միաժամանակ ծանր վնասվածքի պատճառով ստիպված էր եղել լքել խաղադաշտը: Բժշկական հետազոտությամբ պարզվել է, որ ֆուտբոլիստին ապաքինման համար 2 ամիս է անհրաժեշտ: Այնպես որ Ռոբենը ոչ միայն չի մասնակցի չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչում «Բարսելոնի» հետ հանդիպմանը, այլեւ բաց կթողնի Ռումինիայի եւ Հայաստանի հավաքականների հետ ընտրական մրցախաղերը:

Հայաստանի հավաքականների հետ ընտրական մրցախաղերը:

Գերմանական թիմերը 700 մլն եվրոյի պարտք ունեն

Գերմանիայի ֆուտբոլային միության տվյալներով առաջին եւ երկրորդ բունդեսլիգաների 36 պրոֆեսիոնալ ակումբների ընդհանուր պարտքը կազմում է 700 մլն եվրո: Ֆեդերացիան 72 մլն եվրոյի վնաս է կրել: Թեեւ այս տխուր փաստին, ֆուտբոլային չինովնիկների կարծիքով, ֆինանսական ճգնաժամը հասել է մի այնպիսի կետի, որից հետո իրավիճակը կսկսվի ասիճանաբար շտկվել: Պարտքերի պատճառով ակումբները ստիպված են եղել աշխատավարձերը կրճատել միջին հաշվով 45 տոկոսով: Բացի այդ, հովանավորների ներդրումներն առաջին անգամ ավելի շատ եկամուտ են ապահովել, քան խաղերի հեռուստահեռարձակման իրավունքի վաճառքը:

15-ամյա ֆուտբոլիստը հետաքրքրել է «Չելսիին»

«Չելսին» հետաքրքրվում է անգլիական «Սաութհեմփթոնի» 15-ամյա ֆուտբոլիստ Թեո Վալկոտայով, որն առայժմ ֆուտբոլասերներին ծանոթ չէ: Սակայն «Չելսիի» մարզիչ Ժոզե Մոուրինյոն ցանկանում է նրան թիմ հրավիրել: Ակումբը պատրաստ է Վալկոտայի համար մոտ 2 մլն եվրո վճարել:

Հիեռոն հրաժեշտ կտա ֆուտբոլին

Մադրիդի «Ռեալի» նախկին ավագ Ֆեռնանդո Հիեռոն, որ ներկայումս հանդես է գալիս անգլիական «Բոլտոնում», մրցաշրջանի ավարտից հետո հրաժեշտ կտա ֆուտբոլին: Նա մտադիր էր ելույթներն ավարտել դեռեւս անցյալ տարի, երբ ավարտվեց պայմանագիրը Քաթարի թիմի հետ: Սակայն անսպասելիորեն նա հրավեր ստացավ «Բոլտոնից», որն ուրախությամբ ընդունվեց: Հիեռոն վաղուց էր երազում խաղալ Անգլիայում: Նա գոհ է իր ելույթներից անգլիական թիմում, որտեղ հանդես է գալիս «Ռեալի» նախկին ֆուտբոլիստներ Իվան Կամպոյի եւ Ժուլիո Սեզարի հետ: Ֆեռնանդո Հիեռոն իսպանական «Վալյադոլիդի» սան է: Նա Մադրիդի «Ռեալում» հանդես է եկել 1989-2003 թթ., հետո մեկ մրցաշրջան խաղացել է Քաթարում: Հիեռոն հայտարարել է, որ ելույթներն ավարտելուց հետո հանգիստ պայմաններում կորոշի, թե ինչո՞վ զբաղվի:

Սվենսոնը տեղափոխվեց «Էլֆսբորգ»

«Սաութհեմփթոնի» կիսապաշտպան Անդերս Սվենսոնը տեղափոխվեց շվեդական «Էլֆսբորգ»: Նա անգլիական ակումբ էր տեղափոխվել 2001 թ.՝ չորս տարվա պայմանագիր կնքելով թիմի հետ: Պայմանագիրը երկարաձգելու առաջարկ չստանալով, Սվենսոնը հեռացավ թիմից:

Կուռնիկովան կրկին կորտ դուրս կգա

Ռուսաստանցի թենիսիստուհի Աննա Կուռնիկովան եւ ամերիկացի Ջիմ Կուրյեն մայիսի 21-ին ԱՄՆ-ում կայանալիք թենիսի ցուցադրական մրցաշարի գլխավոր գործող անձերը կլինեն: Բացի նրանցից, մրցաշարում հանդես կգան եւս 2 թենիսիստներ, որոնց անունները հայտնի կդառնան ավելի ուշ: Չորս թենիսիստները կանցկացնեն 2 հանդիպում մենախաղում եւ մեկը՝ զուգախաղում:

Պրոֆեսիոնալ թենիսիստուհու իր կենսագրությունում 23-ամյա Աննա Կուռնիկովան անցկացրել է 306 հանդիպում, որից շահել է 184-ը: Նրան այդպես էլ չհաջողվեց մենախաղում հաղթող ճանաչվել որեւէ մրցաշարում: Թեեւ ժամանակին նա աշխարհի 10 ուժեղագույն թենիսիստուհիների շարքին էր դասվում: Իսկ ահա Ջիմ Կուրյեն բավական հարուստ մարզական կենսագրություն ունի: Նա մենախաղում 23 մրցաշարերի հաղթող է, այդ թվում չորս անգամ լավագույնն է ճանաչվել «Մեծ սաղավարտի» մրցաշարերում:

Յոնսենն ավարտեց ելույթները

35-ամյա Ռոնի Յոնսենը, որը մարզասերներին հայտնի է «Մանչեսթր յունայթեդում» եւ «Աստոն Վիլայում» ունեցած ելույթներով, վճռել է ավարտել ելույթները մեծ ֆուտբոլում: Պատճառը ծնկի ստացած ծանր վնասվածքն է: 90-ական թվականների «Մանչեսթր յունայթեդի» լավագույն պաշտպաններից մեկը մի քանի տարի առաջ ծանր վնասվածք էր ստացել եւ ենթարկվել մի քանի վիրահատության: Սակայն լրիվ ապաքինվել նրան այդպես էլ չհաջողվեց, ինչը խանգարում էր ուժերն ու կարողությունները լիարժեք դրսեւորել: Վերջին շրջանում նա հանդես էր գալիս «Նյուքասլում»: «Ես դժգոհ էի իմ խաղից, ֆուտբոլն այլեւս ինձ հաճույք չէր պատճառում: Բացի այդ ծնկիս ցավերն ուժեղացել էին: Ուստի որոշեցի ավարտել ելույթներս մեծ ֆուտբոլում: Մտադիր եմ զբաղվել մարզչական գործունեությամբ», նշել է Յոնսենը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը հայտարարում է մրցույթ՝ նվիրված Մեծ եղեռնի 90-ամյակին

ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը անցկացնում է հեռավար մրցույթ, որին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա քաղաքացիները:

• Մրցույթին կարող են մասնակցել աշակերտներ եւ ուսանողներ:

• Մասնակիցները մրցութային հարցերի պատասխանները պետք է ներկայացնեն ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն մինչեւ 2005 թ. մարտի 25-ը:

• Մրցույթի արդյունքները ամփոփվելու են մինչեւ 2005 թ. ապրիլի 1-ը:

• Սահմանվում է երկու գլխավոր մրցանակ՝ մեկը ՀՀ քաղաքացիների եւ մյուսը օտարերկրյա քաղաքացիների համար:

• Մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված երկու հեղինակները կպարգեւատրվեն հուշանվերներով եւ հնարավորություն կստանան մասնակցելու ցեղասպանությանը նվիրված միջոցառումներին (կեցության հետ կապված ծախսերը հոգալու է ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը):

• Մրցույթում բարձր գնահատականներ ցուցաբերածները կպարգեւատրվեն նաեւ հուշանվերներով (գրքեր եւ ալբոմներ ցեղասպանության թեմաներով):

• Արտասահմանյան երկրների քաղաքացիները հարցաբարի իրենց պատասխանը կարող են ուղարկել նախընտրած լեզվով:

Մասնակցելու եւ ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն.

Հասցեն՝ 375010, Երեւան, Գլխավոր պողոտա, Կառավարական տուն 3, 6-րդ հարկ:

Հեռ. (3741)52-56-62, (3741)58-95-26, (3741)58-13-91

ՀՀ կրթության եւ գիտության նախարարության 609, 619 սենյակներ,

ֆաքս (3741)52-43-27,
e-mail: BoardofRegents@aol.com; competition90@yahoo.com (պատասխանների համար)
web: www.edu.am

Պատասխանների վրա պետք է նշված լինի մասնակցի անուն, ազգանունը, ծննդյան թիվը, երկիրը, քաղաքը եւ կրթօջախի անվանումը:

Ինչ գիտեք Հայոց ցեղասպանության մասին

Ձեր շարադրանքը պիտի ընդգրկի հետեւյալ հարցերի պատասխանները

1. Ինչպե՞ս է արտացոլվել Հայկական հարցի ծագումն ու բովանդակությունը հայոց պատմագրության մեջ: Հայոց ցեղասպանությունը ինչպե՞ս է առնչվում Հայկական հարցին: Ո՞րն է Հայկական հարցի «լուծման» երիթուրքական քաղաքականությունը:

2. Ինչ նշանակություն ունեն Սան-Ստեֆանոյի եւ Բեռլինի պայմանագրերը Հայկական հարցի եւ Հայոց ցեղասպանության պատմության մեջ:

3. Ինչո՞ւ է հայ ֆիդայական շարժումը համարվում անհրաժեշտ հանգրվան հայոց ազգային-ազատագրական պայքարի մեջ:

4. Ինչ տեղ են գրավում կիլիկիահայության 1909 թ. կոտորածները հայոց ցեղասպանության պատմության մեջ:

5. Ինչ են պանթուրքիզմը եւ պանթուրանիզմը Հայոց ցեղասպանության պատմության մեջ: Որո՞նք են դրանց տարբերությունները:

6. Որքանո՞վ են համընկնում ՄԱԿ-ի կողմից վավերացված «Ցեղասպանության համաձայնագրի» կետերը Հայկական ցեղասպանության հետ:

7. Ի՞նչ ազդեցություն ունեցան ներքոհիշյալ գործոնները Հայոց ցեղասպանության գործադրման վրա.

• մահմեդական զանգվածների տրամադրությունները,

• պատերազմական իրավիճակը,

• «Թեքիլեթը մահսուսե»-ի ստեղծումը:

8. Ի՞նչ փաստերով եւ օրինակներով կհիմնավորեք Ձեր կարծիքը հետեւյալ մոտեցումների վերաբերյալ.

• Հայերը եւ թուրքերը դարեր շարունակ խաղաղ ապրել են միասին: Սակայն 19-րդ դարի կեսերից հայերը սկսեցին հանդես գալ իշխանությունների դեմ, որն էլ առաջ բերեց պատասխան գործողությունների անհրաժեշտություն:

• 1915-ի կոտորածները ոչ թե կանխամտածված էին, այլ պատերազմի հետեւանք:

• Հայերը ապստամբության էին դիմել եւ փորձում էին ռուսների օգնությամբ կործանել օսմանյան կայսրությունը:

• Մեկուկես միլիոն զոհ անկարելի է. նույնիսկ ամբողջ կայսրության մեջ այդքան հայ չէր բնակվում:

• Պատերազմի տարիներին թուրքերը երկու միլիոն զոհ տվեցին: Այդ թիվը անհամեմատ մեծ է հայ զոհերի թվից:

9. Ինչպե՞ս արձագանքեցին Ֆրանսիան, Անգլիան, Ռուսաստանը, Գերմանիան եւ ԱՄՆ-ն հայկական կոտորածներին եւ տեղահանություններին պատերազմի ընթացքում:

10. Ի՞նչ առանձնահատկություններ ունեն Կ. Պոլսի եւ Նյուրնբերգի դատավարությունները ու դրանց արդյունքները:

11. Ի՞նչ ընթացք ունեցավ հայահալած քաղաքականությունը Եթմալական Թուրքիայում: (Կիլիկիահայության նոր աղետը: 1920 թվականի հայ-թուրքական պատերազմը):

12. Ինչպե՞ս ոգեկոչվեց Հայոց ցեղասպանության 50-ամյակի խորհուրդը 1965 թվականին, Հայաստանում եւ սփյուռքում:

13. Ի՞նչ է նշանակում Եղեռնի գրականություն: Ինչո՞ւ են հարատեւում Եղեռնի պատմական հիշողությունը եւ մեր հավաքական հոգեբանության արտացոլումը գրականության մեջ:

14. Ինչո՞ւ ենք ասում, թե ցեղասպանությունը շարունակվում է: Ո՞րն է, Ձեր կարծիքով, հայերիս անելիքը այս պարագայում:

15.Միջազգային ո՞ր այցելություններում է քննարկվել եւ ի՞նչ ընթացք է ունեցել Հայոց ցեղասպանության հարցը վերջին հիսուն տարիներին:

16.Ի՞նչ ընթացք ունեցավ Հայկական հարցի քննարկումը Լոնդոնի եւ Լոզանի համագումարներում:

17. Ի՞նչ արտահայտություն գտավ համաթուրքական գաղափարախոսությունը 1988 թ. ղարաբաղյան շարժման ընթացքում:

18. Ինչպե՞ս վերահիմնավորենք ցեղասպանության իրողությունը եւ Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս այն դարձնենք ազգային ինքնանորոգման եւ ինքնահզորացման պարտականություն եւ պատմական ընթացք:

19. Ո՞րն է, ըստ Ձեզ, հայերիս պատմաբարոյական անելիքը ցեղասպանության չենթարկվելու եւ մեր գոյապայքարում միշտ հաղթանակելու համար:

Ծանոթություն - Յուրաքանչյուր հարցի պատասխանի ծավալը չպետք է գերազանցի երկու տպագիր էջի սահմանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ARMENTEL
ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻԱ
ARMENIA TELEPHONE COMPANY

Արմենտելը երկարաձգում է բջջային պայմանագրային ծառայությունների բիլինգ համակարգի գնման համար հայտարարված Միջազգային բաց մրցույթի վերջնաժամկետը մինչեւ մարտի 11-ը, տեղական ժամանակով ժամը 16:00-ն:

Կնքված ծրարներով առաջարկների բացման ժողովը կկայանա մարտի 16-ին, տեղական ժամանակով ժամը 11:00-ին հետեւյալ հասցեում՝

Երեւան 375014, Ա. Սիսակյան 2 փողոց, Արմենտել ՀՁ ՓԲԸ, 5-րդ հարկ, խորհրդակցությունների սենյակ:

Ամփոփիչ ժողովը կկայանա մարտի 25-ին, տեղական ժամանակով ժամը 15:00-ին նույն հասցեում: Կարող եք ներկա լինել նշված ժողովներին:

Արմենտել ՀՁ հասարակայնության հետ կապերի ծառայություն

INVITATION TO BID

ARM 023-05

UNDP Armenia hereby solicits the bids for the following services.

• Computer and telephone network mounting

Interested companies may obtain further information and the full set of tender documents at the following address:

Name of Office:	UNDP Armenia Country Office
Address:	14 Petros Adamyan St., Yerevan, 375010, Armenia
Telephone & Fax:	Tel.: +3741 566073 ext. 126, Fax: +3741 543811
Contact Person:	Mr. Levon Hovsepyan

Bids must be delivered to the above office on or before 15:00, March 11, 2005. Late bids shall be rejected.

UNDP Armenia Country Office
14 Petros Adamyan St., Yerevan, Armenia

Նորարար փորձառական արվեստի կենտրոն

Մարտի 8-25-ը տեղի կունենա Միջազգային փառատոն՝

«ՄԱՐՏԻ 8՝ ԿԱՆԱՆՑ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ»

բացումը՝ մարտի 8-ին, ժ. 17-ին
Համադրող՝ Եվա Խաչատրյան
Դիտման ժամերը՝ երկուշաբթի-ուրբաթ, 11:00-17:00
շաբաթ, 11:00-15:00

ՄԱՀԱԶԴ

Սումիասյանների ընտանիքը խոր վշտով հայտնում է իրենց սիրելի մոր՝ **Անժելա Սումիասյանի** մահվան մասին:

Հոդարկավորությունը տեղի կունենա այսօր՝ մարտի 4-ին, ժամը 14-ին Զավարյան 6 հասցեից:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգ» օրաթերթի խմբագրությունը վշտակցում է պարոնայք Ալբերտ եւ Խաչատուր Սումիասյաններին, ինչպես նաեւ մյուս հարազատներին, իրենց սիրելի տիկնոջ, մոր եւ հարազատի՝ **Անժելա Սումիասյանի** մահվան կապակցությամբ:

Invitation to bid

Masters Consulting Group in association with Ideas Unlimited hereby solicits the bids for **printing of greeting cards.**

Interested companies may obtain further information and the full set of bidding documents by contacting via:

email: thisisour@email.com
phone: (09) 33 33 04

The deadline for obtaining of bidding document is 18:00 March 15, 2005
The deadline for submission of bids is 15:00 March 16, 2005

ՀՀ ԿԲ խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը մարտի 3-ի նիստում որոշեց հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքում արտարժույթի առք ու վաճառքի եւ արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից կիրառման համար թույլատրելի հսկիչ-դրամարկղային մեքենաների, համակարգչային սարքավորումների եւ համակարգչային ծրագրերի ցանկը, արտարժույթի առք ու վաճառքի եւ արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաներին եւ համակարգչային սարքավորումներին ներկայացվող պահանջները, արտարժույթի առք ու վաճառքի եւ արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործունեություն իրականացվող անձանց կողմից կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաների եւ համակարգչային սարքավորումների գրանցման կարգը եւ շահագործման կանոնները, «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը եւ հրապարակումը» կանոնակարգ 15-ը՝ նոր խմբագրությամբ, 2004-2005 թթ. հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «ՀՀ զինված ուժեր» հուշադրամների ուրվագծերը, ՀՀ ԿԲ ֆինանսական դիտարկումների կենտրոնի կանոնադրությունը եւ վերջինիս եռամյա ստրատեգիայում ընդգրկված միջոցառումների գնահատման համակարգը, ինչպես նաեւ ՀՀ ԿԲ կողմից թողարկվող կարճաժամկետ պետական պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության եւ մարման սպասարկման կարգը, որը կուղարկվի ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն:

Խորհուրդը որոշեց փոփոխություններ եւ լրացումներ կատարել «Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը եւ կարգավորումը» կանոնակարգ 10-ում:

Խորհրդի որոշմամբ «Հայկ-91» կոոպերատիվին, «Կարմեն» ՍՊԸ-ին, «Երիցյան Նուբե» ՍՊԸ-ին, Կարեն Փափազյանին, Արթուր Սուքայելյանին, Արայիկ Բաղդասարյանին տրամադրվել են արտարժույթի առք ու վաճառք իրականացնելու լիցենզիաներ, իսկ «Թրեյդեր» ՍՊԸ-ին՝ այլ վայրերում եւս արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու լիցենզիա: Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու թիվ 534, 387, 403, 177 եւ 177/1 լիցենզիաներն ուժը կորցրած են ճանաչվել:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

Վրիպակ

Օրաթերթի 2005 թ. մարտի 3-ի համարում տպագրված «Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-05/35 ծածկագրով մրցակցային բանակցությունների մասին հայտարարության տեքստում տեղ է գտել վրիպակ՝ Վ. Ագարակի փոխարեն կարդալ Նոր Եդեսիա:

FOR YOUR INTERNAL NEWS OF ARMENIA LOG ON TO www.azg.am

.Ѵ. «ՎԻԿՏՈՐԻԱ» ԿՈՆՑԵՌՆԸ

ԻՐ «ԱԴՐԻԱՏԻԿ» ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ ՎԱՃԱՌՔԻ Է ՀԱՆԵԼ
ՆՈՐ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿ
ՍՊԻՏԱԿ, ՄԱՐՄԱՐԻ ԵՎ ԿԱՂՆԵ ՔԱՅՏԻ ՖԱԿՏՈՒՐԱՅՈՎ ՏԱՐԲԵՐ ՉԱՓՍԵՐԻ
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏՈՒՀԱՆԱԳՈԳԵՐ
(ПОДОКОННИКИ И ОТЛИВЫ)

☎ 58-39-96, 54-21-39, 44-63-24

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 03. 03. 2005 Գինը՝ 100 դրամ